

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

АРМЕНИЯ В МИРОВОЙ КАРТОГРАФИИ

ARMENIA IN THE WORLD CARTOGRAPHY

Ռուբէն ԳԱԼՉԵԱՆ • Рубен ГАЛЧЯН • Rouben Galichian

2015

Հայաստանը համաշխարհային քարտէզագրութեան մէջ

Հայաստանն իր մշակութային և քաղաքական կազմաւորմամբ գոյութիւն է ունեցել աւելի քան 3000 տարի: Վերջին հազար տարիներին շրջապատուած լինելով ռուս, պարսիկ, թուրք, ինչպէս նաև կովկասեան այլ ցեղերի ժաղովուրդներով: Նա գոեատևել է հակառակ նրան որ իրեն շրջապատող շատ աւելի մեծ ուժեր ու պետութիւններ անհետացել են: Նրա գոյութիւնը նշւել է քարտէզագրութեան ծննդեան շրջանից ի վեր, յաճախ նաև նշելով նրա սահմանները՝ որոնք յետ ու առաջ են շարժւել ու փոփոխւել ըստ հայ ժաղովրդի քաղաքական իրավիճակի:

Այստեղ առաջին անգամը լինելով մէկ հատորի մէջ հաւաքուած կարելի է տեսնել հնագոյն ժամանակներից մինչև այսօր գոյութիւն ունեցող Հայաստանի շրջանին վերաբերող կարևորագոյն քարտէզները: Այստեղ են Հայաստանը ներկայացնող քարտէզներ, սկսած ամենահնից՝ մեր թւականութիւնից առաջ վեցերորդ դարի բաբելոնեան կաւէ սալիկից՝ որին հետևում են հին յոյն և աղեքսանդրիացի քարտէզագէտների աշխատանքները, ինչպէս նաև վաղ քրիստոնէական, իսլամական ու օսմանեան քարտէզները: Գրքում արտատպւած են նաև նրոպական կարևորագոյն քարտէզագէտների աշխատանքներից նմուշներ:

Այս հազւագիւտ քարտէզագրական գանձերը ի մի բերելու համար Ռուբէն Գալչեանը քարտէզներ է ընտրել Բրիտանական Գրադարանից, Ֆրանսիայի, Աւստրիայի, Միւնխենի քաղաքային գրադարաններից, ԱՄՆ Կոնգրեսի Գրադարանից, ինչպէս նաև Օքսֆորդի, Մանչեստերի և Իտալիայի տարբեր քաղաքների գրադարաններից ու թանգարաններից: Այստեղ հաւաքած են 128 քարտէզ ու պատկեր, որոնց ընկերակցում են տեղեկութիւններ՝ նրանց աղբիւրների, հեղինակների, պարունակութեան և առանձնայատկու-թիւնների վերաբերեալ, ինչպէս նաև 39 քարտէզի դետալներ: Հեղինակը ստեղծել է լուրջ գիտական և գեղարուեստական մի աշխատանք, որը յոյժ կարևոր է բոլոր նրանց համար, որոնք հետաքրքրուած են Հայաստանի, Կովկասի, ինչպէս նաև Օսմանեան ու Իրանական Կայսրութիւնների պատմութիւնով ու աշխարհագրութիւնով:

Армения в мировой картографии

Армения как культурное и политическое образование существовала более 3000 лет. На протяжении последних тысячелетий окруженная русскими, персидскими, турецкими, кавказскими племенами, она продолжала существовать, в то время, как многие соседние более крупные государства и образования исчезли. Существование Армении отмечалось со времени появления картографии, часто отмечались и ее границы, которые менялись - расширялись или сужались - в зависимости от политического положения армянского народа.

Впервые в одной книге собраны важнейшие карты с древнейших времен до наших дней, относящиеся к области Армении. Здесь показаны представляющие Армению карты, начиная с самой древней - вавилонской глиняной плитки VI в. до н. э. За ней следуют труды древнегреческих и александрийских картоведов, а также раннехристианские, исламские и османские карты. В книге помещены также образцы работ виднейших европейских картоведов.

Чтобы собрать воедино эти редкие картографические сокровища, Рубен Галчян выбирал карты из Британской библиотеки, Национальной библиотеки Франции, Национальной библиотеки Австрии, Мюнхенской городской библиотеки, Библиотеки Конгресса США, а также из библиотек и музеев Оксфорда, Манчестера и разных городов Италии.

Здесь собрано 128 карт и рисунков, которые сопровождаются сведениями об их источниках, авторах, об их содержании и особенностях, а также 37 деталей карт. Автор создал серьезный научный и художественный труд, который очень важен для тех, кто интересуется историей и географией Армении, Кавказа а также, Османской и Персидской империй.

Armenia in the World Cartography

Armenia as a cultural and political entity has existed for over 3,000 years. Buffeted for the last 1,000 years between Russians, Turks, Persians and the various peoples of the Caucasus, Armenians have remarkably survived the looming presence of much more powerful neighbours. The existence of the country has been recorded by map-makers since the beginnings of cartography - including the various configurations of the borders of the Armenian homeland which have shifted backwards and forwards with the political fortunes of its peoples.

This book, for the first time, brings together an extraordinary collection of maps from the earliest times into the modern era. It reproduces the most important representations of Armenia, from the oldest known version - a Babylonian clay tablet of the sixth century BC - to the renderings of Greek and Alexandrian cartographers, the early Christian maps as well as versions from Ottoman and other Islamic centers. Among the identified sixteenth and seventeenth century European maps.

In assembling the cartographic treasures in this book, Rouben Galichian has included maps from the British Library, the British Museum, the Bibliothèque Nationale de France, the Österreichische Nationalbibliothek, Bayerische Staatsbibliothek, the Library of Congress, the University of Bologna, the John Rylands Library and other sources.

With his detailed descriptions of the 128 maps appearing here and his introductory text, the author has produced a work of reference and artistic distinction, which will prove an essential tool to all who follow the history of Armenia, the Caucasus, the Ottoman and Iranian worlds, as well as to collectors and enthusiasts of cartography.

ՀԱՅԱՍՏԱՆԸ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

АРМЕНИЯ
В МИРОВОЙ КАРТОГРАФИИ

ARMENIA
IN THE WORLD CARTOGRAPHY

Հեղինակ՝ ՌՈՒԲԷՆ ԳԱԼՉԵԱՆ
Автор РУБЕН ГАЛЧЯН
Author ROUBEN GALICHIAN

Երկրորդ հրատարակութիւն • Второе издание • Second Edition
2015

Նախաբան
Քրիստոֆեր ՈՒԱՔԵՐ

Предисловие
Кристофера Уокера

Preface by
Christopher J. Walker

Ռուսերէն թարգմանութիւնը Ալլա և Կարինէ Ալեքսանեանների
Русский перевод Аллы и Карине Алексанян

Գիրքը հրատարակուած է բարերար Պրն. Վարդան Ազատի Վարդանովի մեկենասութեամբ:

Книга издана при содействии благотворителя Вартана Азатовича Вартанова.

Publication of this volume has been made possible by the generous grant provided by Mr Vartan Azatovich Vardanov.

Copyright © 2015 by Rouben Galichian

The right of Rouben Galichian to be identified as the author of this work has been asserted by the author in accordance with the Copyright, Designs and Patent Act 1988.
All rights reserved. Except for brief quotations in a review, this book, or any part thereof, may not be reproduced, stored in or introduced into a retrieval system, or transmitted, in any form or by any means, electronic, mechanical, photocopying, recording or otherwise, without the prior written permission of the publisher.

Էջադրումը՝ ՓՐԻՆԹԻՆՖՈ – Երևան, 2014
Дизайн ПРИНТИНФО – Ереван, 2014
Book design by PRINTINFO, Yerevan, 2014

Ի Հայրապետութեան Կաթողիկոսին Ամենայն Հայոց,
Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Գարեգնի Երկրորդի

При Патриаршестве Католикоса Всех Армян Гарегина Второго

In the Patriarchate of His Holiness Garegin the Second,
Catholicos of All Armenians

* * * *

Հրամանաւ Տ. Եզրասի Ս. Արքեպիսկոպոսի,
Առաջնորդի Ռուսաստանի և Նոր-Նախիջևանի թեմի

Повелением Главы Российской и Ново-Нахичеванской
Епархии Архиепископа Езраса

By order of Archbishop Yezras, Primate of the Diocese of the
Armenian Apostolic Church of Russia and New-Nakhijevan

* * * *

Ի Յիշատակ Հայոց Ցեղասպանութեան հարիւրերորդ տարելիցի

В Память столетия Геноцида Армян

In Commemoration of the Centenary of the Armenian Genocide

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նախաբան	8/9	Предисловие
Հայաստան. Պատմական ակնարկ	10/11	Армения. Исторический очерк
Ներածական	13/15	Введение
Հայաստանի Քարտէզագրութեան համառօտ պատմութիւն	19/30	Краткая история картографии Армении
Աշխարհագրական անունների համառօտ բառարան	48/51	Словарь географических названий
Քարտէզների ցուցակ	57/59	Список карт
Քարտէզներ	65	Карты
Գրականութիւն	258	Литература
Անուանացանկ	260/264	Именной указатель

CONTENTS

Maps. A Preface to the original edition	9
Armenia: A Historical note	11
Foreword	15
A brief history of Maps of Armenia	41
Glossary of frequently used geographical names	54
List of maps	61
Maps	65
Bibliography	258
Index of Names	268

ՔԱՐՏԷԶՆԵՐ: Նախաբան

Քրիսփոֆեր Ուաքեր

Այս հատորում ներկայացւած քարտէզները, ինչպէս նաև կից ուսումնասիրութիւնը, փաստում են, որ հին քարտէզները ցուցադրական հետաքրքրաշարժ իրեր, կամ շրջանակւած և պատից կախելու համար ակնահաճոյ առարկաներ լինելուց աւելի՝ հիմնական և կենսական կարևորութիւն ունեցող նիւթեր են պատմութեան, գիտութեան և միջազգային առևտրի լուրջ ուսումնասիրութեան համար:

Առանց քիչ թէ շատ ճշգրիտ մի քարտէզ ուսումնասիրելու՝ անհնարին է ըմբռնել հին և արդի աշխարհի քաղաքական զարգացումները: Անհնար է արժէքաւորել իշխանութիւնների ուժի հենարանների դերն ու ազդեցութիւնը, առանց անդրադառնալու տարածաշրջանային առանձնայատկութիւններին և փոխ-հարաբերութիւններին: Իշխող և հպատակ շատ ազգերի անխոհեմ գործերն ու գժտութիւնները յաճախ ծագում են քարտէզների անիրազեկութիւնից (կամ շատ փոքր չափանիշով քարտէզներ դիտելուց): Թէ՛ պատերազմի և թէ՛ խաղաղութեան պայմաններում անհրաժեշտ են հնարաւորին չափ կատարեալ քարտէզներ: Պատմութիւնը հետազօտողների համար միշտ կարևոր է եղել ձեռքի տակ ունենալ ուսումնասիրւող տարածքի ճշգրիտ քարտէզը:

Ինչպէս լուսաբանում է ներկայ ուսումնասիրութիւնը, քարտէզագրութիւնն ու գիտութեան զարգացումը ընթացել են զուգահեռ. սկզբնական շրջանում արագ՝ Ալեքսանդրիայի յունական միջավայրում, իսկ յաջորդող երկար դարերի ընթացքին դանդաղ կամ մինչև իսկ ետընթաց զարգացումով, նախքան վաղ-ժամանակակից շրջանի գիտական մեթոդների և ուսումնասիրութեան երևան գալը:

Ծովային առևտրականները (կամ ծովահենները) կարիքն ունէին ամենաճշգրիտ ծովային քարտէզների և ներկայ ուսումնասիրութեան մէջ այդ քարտէզների գաղտնապահութեան մասին տրւած նկարագրութիւնը մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում:

Քարտէզներն ունեն նաև քաղաքական կարևորութիւն: Ներկայ ուսումնասիրութիւնը շատ օգտակար է առանձնացնելու իրականութիւնը կեղծիքից, ինչը նաև վերաբերում է հին քարտէզների վրայ «Հայաստան» անւան գործածւած լինել-չլինելու հարցին: Մինչև ԺԹ դարի վերջերը, «Հայաստան» եզրի ներկայութիւնը քարտէզագէտներին չէր անհանգստացնում: Հաւանաբար այդ ժամանակների քարտէզագէտներին ոչ ոք չէր հրահանգել խափանել որոշ աշխարագրական եզրեր: Հնարաւոր է նաև, որ նրանց իշխանաւորները դէռևս չէին կորցրել իրենց մարդկային խիղճը:

Այս կարճ, բայց կարևոր ուսումնասիրութիւնը վերյիշեցնում է մեզ ոչ միայն այն գործնական դժւարութիւնները, որոնք պիտի յաղթահարւէին նախքան ճշգրիտ քարտէզների երևան գալը, այլև պատմութեան, քաղաքական գաղափարների զարգացման և կամ առևտրի առաջադիմութեան ուսումնասիրութեան համար ձեռքի տակ քարտէզ ունենալու մեր օրերի կենսական պահանջը:

КАРТЫ. Предисловие

Кристофер Уокер

Представленные в этой книге карты, как и прилагаемое к ним исследование, свидетельствуют о том, что древние карты не столько являлись интересными, радующими глаз декоративными предметами, которые обрамляли и вешали на стену, а представляют собой важный, имеющий существенное значение материал для серьезного исследования истории, науки и международной торговли.

Без исследования более или менее точной карты невозможно понять политическое развитие древнего и современного мира. Невозможно оценить роль и влияние сил, служащих политической и военной опорой власти, без обращения к региональным особенностям и взаимоотношениям. Необдуманные действия и распри между многими господствующими и подчиненными нациями часто возникают из-за незнания карт (или же из-за использования карт слишком мелкого масштаба). Как в условиях войны, так и для мирной жизни необходимы насколько возможно более совершенные карты. Исследователям истории всегда необходимо иметь под рукой точную карту изучаемого региона.

Как показывает данное исследование, картография и развитие науки шли параллельно: в начальный период стремительно - в греческой среде Александрии, а в последующие долгие века – медленно или даже регрессивно, до появления научных методов и исследований раннего этапа современного периода.

Морские торговцы (или пираты) нуждались в самых точных морских картах. Данное в книге описание тайн этих карт представляет большой интерес.

Карты имеют также важное политическое значение. Данное исследование очень полезно для отделения реальности от вымысла, что также относится к вопросу об использовании на древних картах названия “Армения”. До конца XIX в. картоведов не волновало присутствие термина “Армения”. Вероятно, картоведам того времени никто не давал указания скрывать некоторые географические термины. Возможно также и то, что власть имущие, диктовавшие картоведам, тогда еще не потеряли совесть.

Это краткое, но важное исследование напоминает нам не только о тех практических трудностях, которые должны были быть преодолены до появления точных карт, но и о жизненной необходимости в наши дни иметь под рукой карту для изучения истории, развития политических идей или прогресса торговли.

MAPS. A Preface to the original edition

by Christopher J. Walker

The selection of the maps shown here, and the essay that accompanies them, prove that antique maps are far more than decorative curios, or quaint items to frame and hang on walls. Rather, they constitute vital and intricate elements at the heart of serious history, science and international trade.

No one can begin to understand the political developments of the ancient or the modern worlds without studying a reasonably accurate map. We cannot assess the logistics of power without consulting a representation of a region and its communications. The follies and misunderstandings of many n-ations, both ruling and ruled, have often derived from ignorance of maps (or from looking at maps with too small a scale). Both warfare and peacemaking require the best possible maps. Students of history need at all times to have access to a map of the area they are studying.

Map creating, as this study makes clear, parallels the development of science itself: rapid at the beginning, in the milieu of the Alexandrian Greeks, followed by many centuries of slow or even reverse development, before the dawn of scientific methods and observation in early-modern times.

Maritime traders (or indeed raiders) required charts of the greatest accuracy, and the account given here of the secrecy with which they were held is of great interest.

Maps too have a political significance. This essay is very useful in separating fact from fiction on the use or not of the term ‘Armenia’ in old maps. Until the late nineteenth century maps-drawers were relaxed about the appearance of the word ‘Armenia’. Maybe map-makers of those times had not yet been ordered to suppress certain geographical terms. Maybe too their rulers did not then have bad conscience.

This short but important study reminds us of the practical difficulties that had to be overcome before the production of accurate maps, and of the vital need today, in the study of history or the development of political ideas or the advancement of trade, to have a map ready at hand.

ՀԱՅԱՍՏԱՆ: Պատմական ակնարկ

Հայերը Հայկական Լեռնաշխարհի, որը գտնւում է Անատոլիայի, Պարսկաստանի և Կովկասի հարաւային շրջանների միջև, բնիկներն են և մաս են կազմում հնդեւրոպական մշակութային աշխարհի: Առաջին ռազմաքաղաքական կազմաւորումները այս տարածքում յայտնի են մ.թ.ա. երկրորդ հազարամեակի կէսերից (ինչպէս օրինակ խեթական արմատներ ունեցող Հայասան): Նախահայկական ցեղերը այս կազմաւորումների էթնիկ բաղկացուցիչներից մէկն էին, եթէ ոչ գերակշռողը: Նրանք կազմում էին նաև Հայկական Լեռնաշխարհի տարածքում դասական արևելեան տիպի պետութեան՝ Ուրարտուի (9-6-րդ դարեր մ.թ.ա.) բնակչութեան գլխաւոր բաղկացուցիչը: Ուրարտուի անկումից յետոյ, հայկական պետական կազմաւորումները շարունակաբար յաջորդեցին մէկը միւսին մինչև 5-րդ դարը (երբեմն ընդարձակ սահմաններով, որոնք գերազանցում էին անգամ Հայկական Լեռնաշխարհի տարածքը, ինչպէս որ էր մ.թ.ա. առաջին դարում՝ Տիգրան Մեծի օրոք): Չորսևկէս դարերի ընդհատումից յետոյ, հայկական պետականութիւնը վերականգնւեց 9-րդ դարի վերջին և գոյատևեց մինչև 11-րդ դարի կէսերը: Չնայած մի շարք փոքր հայկական իշխանութիւններ շարունակում էին գոյատևել Հայկական Լեռնաշխարհի տարածքում և չնայած Կիլիկիայի հայկական պետութեան առկայութեանը (12-14-րդ դարեր) լեռնաշխարհի սահմաններից դուրս, ազգային պետութիւնը որպէս այդպիսին վերականգնւեց միայն 20-րդ դարի սկզբին, երբ Արևելեան Հայաստանի տարածքում ձևաւորւեց Հայաստանի հանրապետութիւնը (1918-1920, շուրջ 60 հազ. քառ. կմ): 1920 թւականին ստեղծւեց Հայաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետութիւնը, որը, որպէս հետևանք Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի զաւթողական քաղաքականութեան, զբաղեցնում էր միայն 29,8 հազ. քառ. կմ տարածք:

Երկարատև չգոյութիւնից յետոյ պետականութեան վերականգնումը հնարաւոր դարձաւ, ի թիւս այլ գործօնների, նաև ոչ քաղաքական բնոյթի հզօր էթնոհամախմբող գործընթացների շնորհիւ, որոնք ապահովում էին հայերի գոյատևումը այն ժամանակաշրջաններում, երբ նրանք ընդգրկւած էին այլ էթնոքաղաքական կազմաւորումների մէջ (Պարսկաստան, Բիւզանդիա, Արաբական խալիֆայութիւն, Օսմանեան կայսրութիւն, Ռուսական կայսրութիւն, ԽՍՀՄ): Հայոց էթնիկութիւնը պահպանող երկու հիմնական գործօններն էին միաբնակ վարդապետութիւն դաւանող Հայոց ինքնուրոյն եկեղեցին (քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն ընդունւել էր Հայաստանում 301 թ.) և գիրը (հայկական այբուբենը ստեղծւել էր Մեսրոպ Մաշտոցի կողմից 405 թւականին):

Պետականութեան վերականգնմանն ուղղւած երկարատև պայքարը դրսևորման նոր ձև ընդունեց կապւած եւրոպական և ռուսական քաղաքականութեան Մերձաւոր Արևելք ներթափանցման հետ: Այս քաղաքականութեան լծակներից մէկը դարձաւ այսպէս կոչւած «հայկական հարց»ը, որը պաշտօնական միջազգային ճանաչում ձեռք բերեց 1878թ., շնորհիւ Սան-Ստեֆանոյի խաղաղութեան պայմանագրի և Բեռլինի կոնգրեսի: 1890-ականներից ի վեր մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը Օսմանեան կայսրութեան հայկական բնակչութիւնը դարձաւ պարբերական զանգւածային ջարդերի և կոտորածների առարկա, տալով հարիւր հազարաւոր զոհեր: Առաջին համաշխարհային պատերազմը երիտթուրքական կառավարութեանը հնարաւորութիւն ընձեռեց լուծելու հայկական հարցը Թուրքիայի բնիկ հայկական բնակչութեան էթնիկական զտման ճանապարհով: 1915-1918 թթ. իրականացւեցին հայերի կոտորածներ և զանգւածային տեղահանութիւններ, այդ ջարդերի վերջին ալիքները հասան նաև հարաւկովկասեան որոշ շրջաններ, ինչպէս օրինակ Բաքու (1918) և Շուշի (1920):

Միջին դարերից սկսած, ի հետևանս օտար նւաճումների և պետականութեան բացակայութեան, ընթանում էր հայկական Սփիւռքի ձևաւորման գործընթացը: Ցամենայն դէպս, նրա շարքերը հսկայական չափերով աճեցին ցեղասպանութեան հետևանքով:

1980-ական թւականների վերջերին հայոց քաղաքական կեանքը մեծապէս պայմանաւորւած էր Լեռնային Ղարաբաղի (հայկական տարածք Ադրբեջանի կազմում) Հայաստանի հետ վերամիաւորմանն ուղղւած ժողովրդական շարժումով: Առաջին անգամ խորհրդային իշխանութեան պայմաններում 1990 թ. Հայաստանում կայացան ժողովրդավարական ընտրութիւններ: 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունւած Հռչակագրի համաձայն, Հայկական ԽՍՀ-ն վերանւանւեց Հայաստանի հանրապետութիւն, իսկ 1991 թ. սեպտեմբերի 21-ին կայացած հանրաքւեն հռչակեց անջատում ԽՍՀՄ-ից և անկախ Հայաստանի հանրապետութեան ծնունդը:

1915 թւականին Օսմանեան կայսրութեան ծրագրած և ձեռնարկած ցեղասպանութեան նպատակն էր հայերին բնաջնջել իրենց պատմական հայրենիքում ու ընդհանրապէս վերացնել այդ տարածաշրջանում: Այդ հրեշավոր քաղաքականութեան զոհը դարձան աւելի քան մէկ և կէս միլիոն հայորդիներ: Սակայն, հսկայեական ճիգերով և մեծ զոհաբերութիւններով Պատմական Հայաստանի հողերի շուրջ մէկ տասներորդի վրայ կերտւեց նոր Հայաստան, ուր ներկայում հիմնւած է և բարգաւաճում է անկախ Հայաստանի Հանրապետութիւնը: Այսօր Հայաստանը՝ որպէս երկիր, և հայերը՝ որպէս Հայաստանի քաղաքացիներ կամ հայկական Սփիւռքում բնակվողներ, մեծ դեր ու ներդրում ունեն զանազան գիտութիւնների, բժշկութեան և մշակոյթի տարբեր ոլորտներում, և աշխարհին ներկայանում են որպէս տարբեր երկրների հանրութեան կողմից յարգւած, մեծարւած և լիարժէք քաղաքացիներ:

АРМЕНИЯ. Исторический очерк

Армяне – коренные жители Армянского нагорья, которое находится между Анатолией, Персией и южными областями Кавказа. Они составляют часть индоевропейского культурного мира. Первые военно-политические образования на этой территории известны с середины второго тысячелетия до н. э. (например, Хайаса, имеющая хеттские корни). Протоармянские племена являлись одним, если не преобладающим, из этнических элементов этих образований. Они составляли также главную часть населения Урарту (IX-VI вв. до н.э.) – государства классического восточного типа на территории Армянского нагорья. После падения Урарту разные армянские государственные образования сменяли друг друга до V в. (иногда они имели обширные границы, превосходящие даже территорию Армянского нагорья, как, например, при Тигране Великом в I в. до н.э.). После перерыва, длившегося четыре с половиной века, в конце IX в. восстановилась армянская государственность и просуществовала до середины XI в. Несмотря на то, что ряд маленьких армянских княжеств продолжали существовать на территории Армянского нагорья и, несмотря на существование Киликийского армянского государства (XII-XIV вв.) вне границ нагорья, национальное государство как таковое было восстановлено только в начале XX в., когда на территории Восточной Армении образовалась Республика Армения (1918-1920 гг., около 60 тысяч кв. км). В 1920 г. была образована Армянская советская социалистическая республика, которая в результате завоевательной политики Турции и Советской России занимала всего 29,8 тысяч кв. км.

Восстановление государственности после ее длительного отсутствия стало возможным, наряду с другими факторами, благодаря мощным этнообъединительным процессам, не имеющим политического характера, которые способствовали выживанию армян в те периоды, когда они были включены в другие этнополитические образования (Персия, Византия, Арабский халифат, Османская империя, Российская империя, СССР). Двумя основными факторами, сохранившими армянскую этничность, были армянская самостоятельная церковь, исповедующая монофизитство (христианство как государственная религия было принято в Армении в 301 г.) и письменность (армянский алфавит был создан Месропом Маштоцем в 405 г.).

Длительная борьба за восстановление государственности приняла новые формы, связанные с проникновением на Ближний Восток европейской и русской политики. Одним из рычагов этой политики стал так называемый “армянский вопрос”, который получил официальное признание в 1878 г. благодаря Сан-Стефанскому мирному договору и Берлинскому конгрессу. С 1890-х гг. до начала Первой мировой войны армянское население Османской империи периодически подвергалось массовым погромам и резне с сотнями тысяч жертв. Первая мировая война дала возможность правительству младотурок решить “армянский вопрос” путем этнической чистки коренного армянского населения Турции. В 1915-1918 гг. были осуществлены погромы и массовые депортации армян. Последние волны этих погромов дошли также до некоторых южнокавказских областей, например, до Баку (1918 г.) и Шуши (1920г.).

Начиная со средних веков, в результате захватнической политики других стран и отсутствия государственности, шел процесс формирования армянского Спюрка (диаспоры). Ее численность колоссально возросла вследствие геноцида.

В конце 1980-х годов политическая жизнь Армении была во многом определена народным движением за воссоединение Нагорного Карабаха (армянская территория в составе Азербайджана) с Арменией. Впервые при советской власти в 1990 г. в Армении состоялись демократические выборы. Согласно принятой 23 августа 1990 г. Декларации, Армянская ССР была переименована в Республику Армения, а состоявшийся 21 сентября 1991 г. референдум провозгласил выход Армении из состава СССР и рождение независимой Республики Армения.

Целью запрограммированного и осуществленного Османской империей Геноцида в 1915 году было истребление армян на их исторической родине и полное уничтожение в регионе. Жертвами этой чудовищной политики стали более чем полтора миллиона армян. Но вопреки этому, величайшими усилиями и ценой больших жертв, на десятой части исторической Армении была воссоздана новая Армения, где ныне процветает Республика Армения. Сегодня Армения как страна и армяне, как граждане Армении, а также представители Диаспоры имеют свою лепту и вклад в разных сферах мировой науки, медицины и культуры и предстают пред миром как полноценные, уважаемые, почитаемые граждане разных стран.

ARMENIA: A historical note

Armenians (self-ethnonym hay) are the aboriginal inhabitants of the Armenian Highlands, located between Anatolia, Persia and south of the Caucasus, and form a part of the Indo-European cultural world. The first military-political formations were known here from the middle of the second millennium BC (e.g. the Hayasa of Hittite sources). Proto-Armenian tribes are believed to be one, if not the predominant ethnic component of these formations. They also formed the main component of Urartu (ninth to sixth centuries BC) – a classical Oriental-type state in the Armenian Highlands. After the fall of Urartu in the sixth century BC, Armenian state formations succeeded one another continuously up to the fifth century CE (sometimes with vast territories, even exceeding the area of the Armenian Highlands, such as during the reign of Tigran the Great in the first century BC). After four and a half centuries of interruption, Armenian statehood was restored in the late ninth century and existed until the mid-eleventh century. Though a number of small Armenian principalities existed in the Armenian Highlands and despite the Armenian kingdom of Cilicia outside of it (twelfth to fourteenth centuries), the national state as such was restored only in the beginning of the twentieth century, when the Armenian Republic (1918–1920, nearly 60,000 sq. km) was formed on the territory of Eastern Armenia. In 1920, the Armenian Soviet Socialist Republic was formed, which occupied only 29,800 sq. km – a result of the expansionist policies of Turkey and Soviet Russia.

After a lengthy period of absence, statehood was restored due to strong ethno-consolidating factors of a non-political character, which secured the survival of the Armenian people during those periods when they were included in other ethnic state formations (Iran, Byzantium, the Arabian caliphate, the Ottoman Empire, the Russian Empire, the USSR). The two main factors preserving Armenian ethnicity were the autonomous Armenian Church of monophysite doctrine (Christianity was adopted in Armenia as a state religion in 301) and the written language (the Armenian alphabet was created by Mesrop Mashtots in 405).

The perennial struggle for the restoration of the state took a new form of expression with the penetration of European and Russian policy into the Near East. One of the levers of this policy became the so-called 'Armenian Question', which gained official international recognition in 1878 after the San Stefano peace treaty and the Berlin Congress. From 1890 until the beginning of the First World War the Armenian population of the Ottoman Empire had been subjected to periodical mass pogroms and massacres, with tens of thousands of Armenians falling victim. The First World War gave the Young Turk government an opportunity to solve the Armenian question – by ethnically cleansing Turkey of the indigenous Armenian population. Between 1915 and 1918 massacres and mass deportations of Armenians were realized, the last wave of these massacres also touching some south Caucasian regions such as Baku (in 1918) and Shushi (in 1920).

From the time of the Middle Ages, the Armenian Diaspora had formed during periods of foreign invasions and in the absence of national statehood. However, its ranks were swelled immensely following the Genocide.

In the late 1980s Armenian political life was strongly stimulated by the movement for the reunification of Nagorno-Karabagh (an Armenian enclave within Republic of Azerbaijan) with Armenia. For the first time under Soviet rule a democratic election was held in Armenia in 1990. In accordance with the declaration ratified by Parliament on 23 August 1990, the Armenian SSR was renamed the Republic of Armenia, and on 21 September 1991 a referendum decided its secession from the USSR and the independent Republic of Armenia was re-born.

Genocide of the Armenians planned and perpetrated by the rulers of the Ottoman Empire and the Young Turks aimed at the cleansing of the region of Historic Armenia from its ethnic Armenian population. Over one and half million Armenians were the innocent victims of this heinous crime. Notwithstanding immeasurable human and economic losses, the Armenians were able to recreate a new Armenia on one tenth of their original homeland with huge effort and sacrifice, which presently exists and is prospering as the independent Republic of Armenia. Today Armenia as a country and Armenians from the homeland as well as those living in the Diaspora play a large role and have significant input in the sciences, medicine and various aspects of cultural activities all over the world. They are regarded as respected and honoured citizens by the international communities all over the world.

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Այս գրքի մասին մտածել եմ այն օրւանից, երբ 1976 թականին մի քանի հին քարտէզ գնեցի և սկսեցի մօտիկից ծանօթանալ նրանց հետ: Մտածում էի պատրաստել մի գիրք, որի մէջ հաւաքւած լինեն աշխարհահռչակ քարտէզագէտների կարևոր քարտէզների գոնէ մէկ մասը՝ որը վերաբերում է Հայաստանի շրջանին: Աշխատանքն սկսել էի, երբ ընկերներիցս մի քանիսը քաջալերեցին այս մտայղացումը: Պէտք է նշել, որ գիրքն առաջին անգամ լոյս է տեսել 2004-ին՝ անգլերէնով, «Հայաստանի պատմական քարտէզները» վերնագրով, որը փոքր յաւելումներով թարգմանել եմ հայերէնի:

Աշխատանքիս արդիւնքն այս հատորն է՝ որը գիտական աշխատութիւն կամ հետազօտութիւն չէ, ինչպիսին արել են մի քանի արժանաւոր պատմաբաններ ու քարտէզագէտներ: Սա պարզապես մի գործ է, որի մէջ ընդգրկւած են աշխարհի հռչակաւոր և կարևորագոյն քարտէզագէտների պատրաստած քարտէզներից մի քանիսը, որոնք վերաբերում են Հայաստանի ընդհանուր տարածքին: Ներկայացւած քարտէզներն այսօր կազմում են աշխարհի քարտէզագրական մշակոյթի աւանդութեան կարևորագոյն մասը:

Հետազօտութեանս ընթացքում աշխատել եմ գտնել հնագոյն քարտէզը, ուր նշւած լինի Հայաստանի (կամ Արարատ, Ուրարտու) անունը, այստեղից յետոյ անդրադարձել եմ յոյն և ալեքսանդրիացի աշխարհագրագէտների աշխատանքներին, միջնադարի, եւրոպական Վերածննդի և վերջապէս այսօրեայ աղբիւրներին:

Ընթերցողին ներկայացնում եմ նաև քարտէզագրութեան համառօտ պատմութիւնը, սկսելով հին ժամանակներից մինչև այսօր, նշելով քարտէզագրութեան և քարտէզ պատրաստելու մէջ եղած կարևոր փոփոխութիւններն ու զարգացումները, նաև տալով որոշ տեղեկութիւններ Հայաստանի քարտէզների և կարևորագոյն աշխարհագրագէտների ու քարտէզագէտների կեանքի ու գործունէութեան վերաբերեալ:

Հատորի քարտէզներին նայելով, կարդացողը կտեսնի, որ Հայաստան (Armenia) կոչւող երկիրը պատմականօրէն գտնւում է աշխարհագրական մի տարածաշրջանում, որը տեղադրւած է Կովկասեան լեռնաշղթայի հարաւում, Սև (Պոնտոսի) և Կասպից Ծովերի (Հիրկանեան կամ Թաբարեստանի Ծով) միջև, որը դարերի ընթացքում շրջապատւած է եղել հետևեալ երկրներով.

- Հիւսիսից սահմաններն են եղել Իբերիան-Վիրքը, Կոլխիդա-Կողքիսն ու Մեգրելիան, որոնք կազմում են այսօրւայ Վրաստանը
- Արևելքից՝ Աղւանքը (Կովկասեան Ալբանիա կամ Արրան), Դաղստանը, Շիրւանը, Թալիշը և այլն, որոնք այսօր միասնաբար կոչւում են Ադրբէջանի Հանրապետութիւն
- Հարաւ արևելքից՝ Պարսկական Աքեմենեան և Սասանեան Կայսրութիւններն ու նոյն երկրի Ատրպատական նահանգը, այսօրւայ Պարսկաստանը (Իրան)
- Հարաւ արևմուտքից՝ Տիգրիս գետը, Բաբելոնը, Քուրդիստանը և Ասորեստանը, որոնք կազմում են այսօրւայ Իրաքը
- Արևմուտքից՝ հնագոյն Լիդիան, Փռիւգիան, պատմական Բիւզանդիոնը, և Օսմանեան կայսրութիւնը՝ այսօրւայ Թուրքիան:

Աւելի քան 25 դարերի ընթացքում Հայաստանի սահմանները հսկայական փոփոխութիւնների են ենթարկւել և երկրի տարածքի չափերը փոփոխւել են, սկսած համահաւասար Գերմանիայի ու Ֆրանսիայի միասնական տարածքից մինչև միմիայն Բելգիայի տարածքի չափ: Բայց այս նիւթը պէտք է թողնել պատմաբաններին:

Հայկական Բարձրաւանդակը կամ Հայկական Լեռնաշխարհը երբեմն կոչւում է Արևելեան Անատոլիա, որը ճիշտ անւանում չէ: Չնայած որ Հայկական Բարձրաւանդակը գտնւում է Անատոլիայի արևելքում, այնուամենայնիւ դրա մասը չի կազմում: Հայկական Բարձրաւանդակը գտնւում է Անատոլիայի Բարձրաւանդակի արևելքում և նրանից բաժանւած է Սւազի (Sivas) և Կեսարիայի (Kayseri) շրջանի հովիտով: Հայկական Բարձրաւանդակի Անատոլիա անւանման հեղինակներն են Օսմանեան և Թուրքական իշխանութիւնները, որոնք ցանկանում են Հայկական որևէ անուն ջնջել Թուրքիայի սահմաններում գտնւող հողերից, և հանել «Հայաստան» և «հայ» անունները իրենց այսօրւայ տարածքից, ուր՝ մինչև 1915 թականը, հայերն ապրել են 2500 տարիներ ի վեր:

Մինչև 18-րդ դարը Օսմանեան ձեռագրերում, յատկապէս Մուստաֆա Իբն-Աբդուլլահի աշխատութիւններում (1609-1657), որը ճանաչւած էր «Քյաթիբ Չելեբի» կամ «Հաջի Խալիֆա» անուններով, և որն առաջին օսմանցի աշխարհագրագէտն էր, Վանի, Էրզրումի և Կարսի շրջաններն անւանւում էր Էրմանիստան (Հայաստան – տես պատ. 108, 109, 117, 120): Նրա ձեռագրի 41-րդ գլուխը կոչւում է «Արևմտեան Հայաստան», որն Օսմանեան գերիշխանութեան տակ էր գտնւում: «Էրմանիստան» անունը նշմարւում է նրա բոլոր աշխատութիւնների մէջ, բայց 19-20-րդ դարերում թուրքական նորատիպ գրքերում Հայաստան անունը աստիճանաբար վերանում է և տեղի է տալիս Արևելեան Անատոլիա անւանմանը: Պատ.117 քարտէզի մէջ կարելի է տեսնել, թէ ինչպէս թարգմանութեան ընթացքում Հայաստանի անունը փոքրացւել է և դարձւել համարեա աննկատելի: Այս անունների թուրքացումը այսօր այն աստիճանի է հասնում, որ 20-րդ դարի հրատարակութեան մէջ Չելեբիի գրքի 41-րդ գլխի վերնագիրը փոխւել է «Արևելեան Անատոլիա»ի: Նոյնիսկ Վանի, Էրզրումի և այլ արևմտահայերի գործած գորգերն ու կարպետներն անւանւում են «Արևելեան Անատոլիա»ի[1]: Այսօրւայ Թուրքիայում անտեղեակ զբոսաշրջիկների ունեցած այն գրքերն ու քարտէզները, որոնց մէջ Թուրքիայի տարածքի վրայ որևէ տեղ նշւած է Հայ կամ Հայաստան անունը, բռնագրաււում են:

Մուստաֆա Քյամալ Աթա Թուրքի մեծագոյն նւաճումներից էր գրաւոր լեզուն արաբատառից լատինատառ դարձնելը: Այդպիսով հին փաստաթղթերն ու արխիւները՝ ուր կային նաև հայի ու Հայաստանի անունները, Թուրքիայի նոր սերունդի համար միանգամից դարձան անընթեռնելի, իսկ վերատպւած գրքերում խմբագիրներն առանց որևէ դժւարութեան հանում են հայութեան հետ առընչւող որևէ նիւթ կամ անուն:

---

[1] *Տես Լոնդոնում տպագրւող ՀԱԼԻ ամսագրի ցանկացած համար:*

Ինչ վերաբերում է այսօրվա Ադրբեջանի Հանրապետութեան դիրքորոշմանը, ապա բավական է հիշել, որ մի քանի Ադրբեջանցի «պատմաբաններ»[2] աշխատում են փաստել, որ 19-րդ դարում հայերին Կովկասի շրջանն են բերել ռուսները և նախքան այդ դարաշրջանը Կովկասի հարաւի տարածքում ապրել են միմիայն աղւանները: Իսկ թուրք պատմաբաններն աշխատում են փաստել, որ թրքական ցեղախմբերը Փոքր Ասիայի՝ այսինքն Անատոլիայի բնիկներ են, որոնք այդ շրջանում բնակւել են աւելի քան 2000 տարի: Եթէ նրանց հաւատանք՝ ապա Հայաստանի ներկայութիւնը աշխարհագրական այդ շրջանում դառնում է հարցական, ինչին հակասում են հատորիս մեջ արտատպւած բոլոր քարտէզները:

Նոյնքան սխալ է նաև Հայաստանը (կամ նոյնիսկ Վրաստանն ու Ադրբեջանը) անւանել «Անդրկովկաս», որը նշանակում է Կովկասի այն կողմում գտնւող. այդ տերմինը աշխարհագրական տեսակէտից միմիայն ճիշտ է Ռուսաստանի համար, իսկ այլ երկրների տեսակէտից դա սխալ արտայայտութիւն է:

Մէկ այլ կարևոր կէտ, որին պետք է անդրադառնամ, այն է, որ թուրքական ցեղերի Հայաստան ներխուժումից յետոյ, երբ 14-15րդ դարերում կազմաւորւեց Օսմանեան Կայսրութիւնը, Հայաստանի և յատկապէս Մեծ Հայքի տարածաշրջանը յաճախ սկսւեց անւանւել Թուրքոմանիա: Այս տերմինը, որը գործածւում էր 17-18 դարերում և հիմնականում Թուրքիայում, հաւանաբար նշանակում էր «Թուրքական Հայաստան»: Նոյն ժամանակաշրջանի Արևմտեան շատ քարտէզագէտներ նոյնպէս օգտագործել են Հայաստանի այդ անւանումը (տէս Ինճիճեան, Վենետիկ, 1806, էջ 13): Սա Թուրքիա և Արմենիա բառերի խառնուրդն է, որոնք միանալով դարձել են Թուրքո-մանիա: Այս բառի գործածութիւնը վերացաւ 19-րդ դարասկզբից: (Տես պատ. 77)

Ընթերցողի ուշադրութեանն եմ յանձնում այն, որ երբ տեքստի մէջ նշել եմ «Իբերիա», նպատակս Կովկասեան Իբերիան կամ Վիրքն է, որը Կոլխիդայի (հայերէն՝ Կողքիս) և Մեգրելիայի հետ միասնաբար կազմում են այսօրւայ Վրաստանը: Իսկ «Ալբանիա» անունը նշում է Կովկասեան Ալբանիան, այսինքն Աղւանքը:

Բոլոր քարտէզներում և պատմական գրութիւնների մէջ մինչև 1918 թւականը Ատրոպատէնը (Ադրբեջանի նախկին անունը) կամ Ատրպատական շրջանը գտնւում է Արաքս գետի հարաւային ափին, այսօրւայ Հայաստանի և Իրանի սահմանի հարաւում: Արաքսի հիւսիսում գտնւող շրջանի «Ադրբեջան» անւանումը սկսեց օգտագործւել այն ժամանակւանից, երբ 1918 թւականին, Ցարական Ռուսաստանի անկումից յետոյ, Անդրկովկասեան երկրները՝ Հայաստան-Ադրբեջան-Վրաստան, ձեռք բերեցին կարճատև անկախութիւն: Այս երեք հանրապետութիւններից «Վրաստան» և «Հայաստան» անունները գոյութիւն են ունեցել դարեր, բայց «Ադրբեջան/Ազերբաիջան» անունը այս տարածաշրջանի համար մի նոր անւանում էր, վերցւած Արաքսի միւս ափին գտնւող՝ Իրանի «Ազերբայջան» (Ատրպատական կամ Ադրբեջան) նահանգի անւանումից: Ադրբեջան անւանում գտած նոր շրջանը, մինչ այդ, բաժանւած էր խանութիւնների: Այստեղի երկրամասերից ամէն մէկ շրջան կոչւում էր իր տարբեր անունով, օրինակ ինում՝ Աղւանք, ապա Դերբէնդ, Շիրւան, Դաղստան, Թալիշ և այլն:

Հատորիս մէջ պատկերւած քարտէզների մեծամասնութիւնը մի որևէ առնչութիւն ունի Հայաստանի հետ, սակայն դա չի նշանակում որ Հայաստանի շրջանի վերաբերեալ բոլոր քարտէզները ներկայացւած են այստեղ: Հատորիս մէջ վերատպւած քարտէզներն ընտրել եմ ըստ հետևեալ հիմունքների: Առաջինն այն է, որ քարտէզագրական տեսակէտից քարտէզն ունենայ իր արժէքը: Երկրորդ՝ որ դա լինի իր ժամանակի քարտէզագրութեան արժանի ներկայացուցիչը, և ապա քարտէզը ներկայացնի իր ժամանակի լաւագոյն առաջադիմութիւնները և ոճը: Այս նպատակով օգտւել եմ Բրիտանական Գրադարանի հսկայական հաւաքածուից, ինչպէս նաև Ֆրանսիայի, Իտալիայի և այլ երկրների գրադարաններից ու թանգարաններից:

Գրքի հիմնական գլխում ամէն քարտէզի հետ կայ բացատրական տեքստ, որն ընթերցողին փոխանցում է քարտէզագրի և քարտէզի չափերի, աղբիւրի և պատրաստման թւականի մասին մանրամասն տեղեկութիւններ: Դրան աւելացւած են բացատրութիւններ քարտէզի իւրայատկութիւնների և տեսակի վերաբերեալ, ինչպէս նաև այնտեղ Հայաստանը պատկերելու և ցուցադրելու կերպը, նշւած սահմանները և առկայ սխալները:

Հատորիս մէջ վերատպւած քարտէզների տեսակներից են աշխարհացոյց, մայր ցամաքների և երկրամասերի քարտէզներ, ուր Հայաստանը որևէ կերպով առկայ է, ինչպէս նաև Հայաստանի և յարակից շրջանների բազմատեսակ քարտէզներ: Գրքիս մէջ բոլոր քարտէզները դասաւորւած են տարեթւերի հերթականութեամբ:

Ի վերջոյ, քարտէզները դիտելով հասնում ենք այն եզրակացութեանը, որ այս տարածաշրջանում այսօր կան միմիայն երկու երկիր, որոնք գոյութիւն են ունեցել աւելի քան 2600 տարի. դրանք են Պարսկաստանն ու Հայաստանը: Թուրքիա անւանումը քարտէզների մէջ երևան է գալիս ամենավաղը 14-րդ դարի կէսերին, այսինքն «Հայաստան»ից 2000 տարի յետոյ, իսկ Վրաստանը որպէս երկիր նշւում է միմիայն 15-րդ դարում: Մինչ այդ Վրաստանի շրջանում նշւած են Կոլխիս, Իբերիա և Մենգրելիա երկրները (Կողքիս, Վիրք և Մեգրելիա): Գալով Ադրբեջանին, ապա այդպէս անւանւած երկիրը երևան է եկել միմիայն 1918 թւականին: Ի հարկէ խօսքս Ադրբեջանի Հանրապետութեան մասին է և ո՛չ Պարսկաստանի Ադրբեջան նահանգի:

Ռ. Գալչեան
Լոնդոն/Երեւան, 2014

[2] *Պրոֆ. Զիյա Բունիաթով, Ֆարիդա Մամեդովա, Իգրար Ալիեւ և Քամիլ Մամադզադէ:*

ПРЕДИСЛОВИЕ

Мысль об этой книге родилась у меня в 1976 г., когда я приобрел несколько старинных карт и начал их изучать. Я думал подготовить книгу, в которой была бы представлена хотя бы часть важных карт, созданных всемирно известными картоведами, а именно, карты, имеющие отношение к Армении. Работу над книгой я начал, когда получил поддержку нескольких моих друзей. Надо отметить, что книга впервые была издана в 2004 г. на английском языке под названием “Исторические карты Армении”, которую с небольшими дополнениями я перевел на армянский язык.

В результате многолетней работы и появилась эта книга, которая не является научным трудом или исследованием, подобно работам именитых историков и картоведов. Это лишь свод части карт, созданных прославленными учеными и относящихся к Армении. Представленные здесь карты составляют сегодня важнейшую часть мирового картографического наследия.

В процессе своих исследований я стремился найти самую древнюю карту, в которой упоминалась бы Армения (или Арарат, Урарту), затем я обращаюсь к трудам греческих и александрийских географов, средневековым, европейским источникам эпохи Возрождения, наконец, к современным источникам.

Читателю предлагается также краткая история картографии начиная с древних времен до наших дней, отмечаются важные изменения и усовершенствования в ее методике, даются также некоторые сведения о картах Армении, о жизни и деятельности знаменитых картоведов и географов.

Глядя на карты книги, читатель увидит, что страна, именуемая Арменией (Armenia), исторически находится в той географической области, которая располагается на южной стороне Кавказского хребта между Черным (Понтийским) и Каспийским (Гирканским или Табарестанским) морями. На протяжении многих веков Армения была окружена следующими странами:

- На севере – Иберия, Колхида и Мегрелия, которые составляют современную Грузию.
- На востоке – Агванк (Кавказская Албания или Арран), Дагестан, Ширван, Талыш и другие, которые вместе в настоящее время именуются Республикой Азербайджан.
- На юго-востоке – персидские Ахеменидская и Сасанидская империи и провинция Персии Атрпатакан – современный Иран.
- На юго-западе – река Тигр, Вавилон, Курдистан и Ассирия, которые составляют современный Ирак.
- На западе – Древняя Лидия, Фригия, историческая Византия и Османская империя – современная Турция.

На протяжении более 25 веков границы Армении претерпевали колоссальные изменения, территория страны менялась: начиная с размеров Германии и Франции вместе взятых она уменьшилась до размеров одной лишь Бельгии. Но этот вопрос оставим историкам.

Армянское плоскогорье или Армянское нагорье иногда именуется Восточной Анатолией, что неверно. Несмотря на то, что Армянское нагорье находится на востоке Анатолии, оно, тем не менее, не составляет ее части. Армянское нагорье находится на востоке Анатолийского плоскогорья и отделено от него долинами Сиваза (Sivas) и Кесарии (Kayseri). Восточной Анатолией именуют Армянское нагорье османские и турецкие власти, всячески стремящиеся вычеркнуть любые армянские названия с земель, находящихся в границах Турции и изъять имена “Армения” и “армяне” с их сегодняшней территории, где до 1915 г. армяне жили более 2500 лет.

До XVIII в. в османских рукописях, особенно в трудах первого османского географа Мустафы ибн Абдуллаха (1609-1657), известного под именем Кятиб Челеби или Хаджи Халифе, области Вана, Эрзерума и Карса именуются Эрманистаном (Айастан – см. рис. 108, 109, 117, 120). 41-я глава его рукописи называется “Западная Армения”, которая находилась под властью Османской империи. Наименование “Эрманистан” прослеживается во всех трудах этого автора, но в XIX-XX вв. в новых турецких изданиях постепенно наименование Армянское плоскогорье или нагорье исчезает и вместо него появляется название Восточная Анатолия. На карте рис. 117 можно увидеть, как в процессе перевода название Армении уменьшилось и стало почти незаметным. Туркизация этих названий дошла сегодня до того, что в издании книги Челеби в XX в. название 41-й главы было изменено на “Восточную Анатолию”. Даже ванские, эрзерумские и другие западноармянские ковры и карпеты переименованы в “восточно-анатолийские”[1]. Сегодня в Турции у несведущих туристов изымаются имеющиеся у них карты и книги, в которых есть какое-либо упоминание об армянах или Армении на территории Турции.

Важнейшим достижением Мустафы Кемаля Ататюрка был перевод турецкой письменности с арабского алфавита на латинский. В результате этого для новых поколений Турции древние документы и архивы, где сохранились также упоминания об армянах и Армении, сразу стали недоступны для прочтения. Из новых же изданий редакторы без труда изымают все материалы и наименования, имеющие отношение к армянству.

Что касается позиции сегодняшнего Азербайджана, то достаточно вспомнить, что несколько азербайджанских “историков” пытаются доказать, что в XIX в. армян на Кавказ привели русские, и до этого века на юге Кавказа жили только албанцы.[2] Турецкие же историки пытаются доказать, что тюркские племена – это коренные жители Малой Азии, т.е. Анатолии, которые жили в этой области более чем 2000 лет. Если поверить им, то присутствие армян в этой географической области становится сомнительным, что четко опровергают все карты, помещенные в этой книге.

Также ошибочно именовать Армению (или даже Грузию и Азербайджан) Закавказьем – “находящийся за Кавказом”, так как этот термин с географической точки зрения может быть правильно применен только по отношению к России, для других же стран он является неприемлемым.

---

[1] *См. любой номер издаваемого в Лондоне журнала ‘HALI”.*
[2] *Профессоры З. Буниатов, Ф. Мамедова, И. Алиев и К. Мамадзаде.*

Другой важный момент, который хочу отметить, это то, что после вторжения в Армению тюркских племен, когда в XIV–XV вв. образовалась Османская империя, территория Армении и особенно Мец Айка (Великая Армения) часто стала именоваться Туркоманией. Этот термин, который применялся в XVII–XVIII вв. в основном в Турции, вероятно, означал “Турецкая Армения”. Многие западные картоведы этого периода также использовали это название Армении (см. Инджиджян, Венеция, 1806, с. 13). Оно является сочетанием двух слов: Турция и Армения – “Турко-мания”. С начала XIX в. этот термин перестал применятся (см. рис. 77).

Отмечу также, что когда я в тексте отмечаю “Иберия”, то имею в виду Кавказскую Иберию, которая вместе с Колхидой (по-армянски – Кохкис) и Мегрелией составляют современную Грузию. А наименование “Албания” означает Кавказскую Албанию, т.е. Агванк.

На всех картах и исторических текстах до 1918 г. Атропатена (бывшее наименование Азербайджана) или область Атрпатакан размещалась на южном берегу реки Аракс, к югу от границы сегодняшней Армении с Ираном. Область, находящаяся к северу от Аракса, стала называться “Азербайджан” с того времени, когда в 1918 г. после распада царской России страны Закавказья – Армения, Азербайджан, Грузия, получили кратковременную независимость. Наименования “Грузия” и “Армения” существовали веками, название же “Адрбеджан/Азербайджан” было новым для данной территории – заимствованным от названия провинции Ирана “Азербайджан” (Атрпатакан или Адрбеджан) – находившейся на другом берегу Аракса. Новая область, названная “Азербайджан”, до того была разделена на ханства. Каждая из областей имела свое отдельное наименование, например, в древности – Агванк, а затем – Дербент, Ширван, Дагестан, Талыш и т.д.

Большинство представленных в этой книге карт имеет то или иное отношение к Армении, но это вовсе не значит, что здесь собраны все карты, касающиеся Армении. Перепечатанные в книге карты я выбирал по следующим принципам. Первое – чтобы карта представляла ценность с картографической точки зрения. Второе – чтобы она представляла собой значимый образец картографии своего времени, ее стиль и лучшие передовые черты. С этой целью я пользовался огромным фондом Британской библиотеки, а также фондами библиотек и музеев Франции, Италии и других стран.

В основной части книги к каждой карте прилагается пояснительный текст, в котором даются подробные сведения о картографе, размерах, источниках и времени создания карты. К этому добавлены пояснения об особенностях карты и ее типе, а также сведения о том, в какой форме и с какими границами на ней показана Армения, а также отмечены имеющиеся ошибки.

Среди перепечатанных в книге карт представлены следующие типы: карты мира, карты материков и регионов, в которых Армения присутствует каким-либо образом, а также разнообразные карты Армении и соседних регионов. Все карты располагаются в хронологическом порядке.

Наконец, изучая карты, мы приходим к выводу, что в этом регионе сегодня есть только две страны, которые существовали здесь более 2600 лет – это Персия (Иран) и Армения. Название “Турция” появляется в картах самое раннее в середине XIV в., т. е. позже “Армении” на 2000 лет, а Грузия как страна отмечается лишь начиная с XV в. До этого времени на месте Грузии отмечаются Колхис, Иберия и Менгрелия (Кохкис, Вирк и Мегрелия). Что касается Азербайджана, то страна с таким названием появляется только в 1918 г. Конечно, речь идет о Республике Азербайджан, а не о персидской провинции Азербайджан.

Р. Галчян
Лондон/Ереван, 2014

FOREWORD

Ever since I bought some old printed maps in 1976, I have been considering preparing a book about the subject in general, in which antique maps drawn by world famous cartographers depicting the geographical area of Armenia would be displayed together. Friends encouraged me to pursue the idea, and I eventually started work on the project.

This book, which is the end result of personal interest, is not a scientific cartographic study, or an examination of the history of Armenia and its borders at various periods of its chequered past. Such research has already been admirably undertaken by academicians and historians with great success. The present volume is a book about a number of historically important maps, which show the general geographical area of Armenia. All these maps were prepared by the highest cartographic and geographic authorities of their time and constitute a vital part of our picture of the past.

In 2004 I published my book entitled *Historic Maps of Armenia. The Cartographic Heritage,* which is a large format volume. The present volume which bears the title *Armenia in World Cartography* is the revised version of the original, published in three languages.

My plan has been to find the most ancient map where Armenia (the land of Ararat or Urartu) is mentioned and from there to examine the works of Greek and Alexandrian geographers and medieval authors, thence moving on to the Renaissance and modern time.

I have included a short history of cartography as it relates to the maps of Armenia, starting with the oldest known maps and continuing through the development of the craft of mapmaking up to the present, describing the important milestones of the craft, as well as providing some basic information about the geographers and cartographers of the past.

A brief description of the history of cartography leads to the map section, where the reader will observe that the country called 'Armenia' is situated in the area sometimes called the Armenian Highlands or Armenian Plateau, roughly in the geographical area south of the Caucasus range of mountains and east of Asia Minor or Anatolia, between the Black Sea and the Caspian Sea. It has borders with the following countries:

1. to the north, the lands of Colchis, Iberia and Mingrelia, collectively known today as Georgia
2. to the east, the countries of (Caucasian) Albania or Aran, including regions of Shirvan, Shaki etc., which are included in the territory of the Republic of Azerbaijan
3. to the south-east, the Province of Atropatene (Iranian Province of Azerbaijan or Adirbegan) in the country of Persia, formerly the Persian Empire (first Achemenid, latterly Sassanid), today's Iran
4. to the south-west, the River Tigris, ancient Assyria, Babylon and Kurdistan, today's Iraq
5. to the west, the Phrygia and Lydia of antiquity, the Byzantium of late antiquity, the Ottoman Empire until 1923, and today's Turkey.

Historically Armenia has been divided into two parts, Greater Armenia and Lesser Armenia (Armenia Maior and Minor). Greater Armenia formed the main body of the landmass located in the Armenian Highlands, whereas Lesser Armenia has been the westernmost part of Armenia, just outside the Armenian Highlands.

Over 25 centuries of existence the borders of Armenia have changed frequently and extensively. The size of its territory has varied from being larger than that of France and Germany combined, to being smaller than Belgium. But let us leave this to the experts and historians.

The Armenian Highlands or the Armenian Plateau, where Armenia is situated, have sometimes been called 'Eastern Anatolia'. This terminology is incorrect, since the Armenian Highlands are located to the east of Anatolia and the Anatolian Plateau, which begins near the valley of Sivas and Kayseri (Caesaria). The Armenian Highlands are not part of Anatolia, and it is therefore incorrect to call them 'Eastern Anatolia'. This terminology was coined some time in the nineteenth century by the Ottoman government, when they wished to assert the Turkish heritage of their lands during periods of friction with Russia and a number of Western governments. Thus the name of the Armenian Highlands was replaced by Eastern Anatolia, removing the name Armenia from the area, where the Armenians had lived continuously for over 2500 years.

In Ottoman manuscripts of the period up to the eighteenth century, in particular in the *Jehān Numā* of Mustafa Ibn-Abdullāh (1609–57), known as Kātib Chelebi or Hādji Khālifah, who was the first Turkish geographer, the areas of Van, Erzerum and Kars are described as part of Armenia. (See Figs 108, 109, 116 and 119.) Chapter 41 of Chelebi's manuscript describes Western Armenia and its borders, which were under Persian and Ottoman rule. The term 'Ermenistan' (Armenia in Turkish and Persian) appears in all his manuscript editions until the late seventeenth century and the printed editions of the early eighteenth century. However from the nineteenth century onwards the newly published editions gradually cease to use this name and begin to replace 'Armenian Highlands' with 'Eastern Anatolia'. This is clearly seen on the map in Fig. 116, where in translating from the German original, the name of Armenia is reduced in size to such an extent as to become barely noticeable. This turkification has been carried out to such an extent that in the twentieth century editions of Chelebi's book, the title of Chapter 41 has been altered from 'Armenia' to 'Eastern Anatolia'. Even carpets woven by the Armenians of Erzerum, Van and other regions have been renamed 'Eastern Anatolian Carpets'.[1] At the present time (2003) any book or map mentioning the name 'Armenia' within the territory of present-day Turkey, which might be carried by the unsuspecting tourist, is subject to confiscation.

One of the crowning achievements of Mustafa Kemal 'Ataturk' was to change the Turkish script. The old Arabic characters were exchanged for the Latin script and

1 This can be seen in most issues of the *HALI* magazine printed in London.

with one stroke of the pen all historic archives and documents, including those that bore the name of 'Armenia', were rendered illegible to the young generation of Turks. Thus any text bearing the name of Armenia could easily be 'adjusted' by the editors, when these books were reprinted using the new script!

It is also incorrect to call Armenia (or for that matter Georgia and Republic of Azerbaijan) 'Transcaucasia', since this terminology (literally meaning 'beyond the Caucasus') is only geographically correct from the point of view of the authorities of Saint Petersburg.

Another important point that I should like to mention for the uninitiated is that after the invasion of the area by the Turkic tribes in the eleventh century and the establishment of the Ottoman Empire in the seventeenth and eighteenth centuries CE (Common Era = AD), the area of Armenia was sometimes shown as 'Turcomania'. The use of this term, mainly during the seventeenth and eighteenth centuries, was encouraged by the Ottoman Sultans and was adopted by many Western cartographers of the time (Injejian – Venice 1806, page 13). It refers to 'Turkish Armenia' and probably arose from the mixing of the words Turkish and Armenia, thus the term 'Turco-mania'. (See Fig. 77.)

I would like to clarify that in the main text any mention of Iberia refers to Caucasian Iberia, which together with Colchis and Mingrelia form today's Georgia. Any mention of Albania refers to Caucasian Albania located to the west of the Caspian Sea.

In accounts and maps produced prior to 1918, the region of Iran called Azerbaijan or Aderbijan (also known as Atropatene, which is the old version of the name Azerbaijan) has always been shown to the south of the Arax(es) River, which is the border of Iran and Armenia today. The name of Azerbaijan in relation to any land to the north of the Arax(es) only appears after 1918, when, subsequent to the fall of imperial Russia, the South Caucasus gained independence from Russia, and the three so-called 'Trans-Caucasian' republics of Armenia, Georgia and Azerbaijan came into existence. The names Armenia and Georgia had been in existence for millennia, but the name Azerbaijan was new for this territory, borrowed from the Iranian province of Azerbaijan, which lies across the river to the south. This territory, prior to being called Republic of Azerbaijan, was divided into various khanates (khans' districts) called Derbend, Shirvan, Dag(h)estan, Talish, Albania (or Arran), Moghan and others.

In the main section of the volume each reproduction is accompanied by an explanatory text, which provides the reader with details of the cartographer, the origin of the map and its date, as well as size and provenance. Additional explanations are offered regarding the particularities of each map and family of maps, with special attention paid to the manner and extent of the depiction of the area of Armenia.

The maps reproduced in the present volume consist of world maps and maps of the continents and various parts of the world where Armenia is shown in one form or other, as well as maps of Armenia itself. The maps are reproduced in chronological order.

All the maps reproduced in this volume have some sort of Armenian connection, but they are only a sample of a vast number of maps of that area. The criteria that I have used in selecting the maps have been, in descending order, the importance of the map, its being representative of a certain era of history and cartography, and finally the manner of its presentation. A huge collection of maps exists in the British Library, where I have sourced most of my maps. Another source is the Bibliothèque Nationale de France. I have also utilized maps from a number of other libraries and museums from all over the world

Finally, looking at these maps we could conclude that in the geographical region of South Caucasus there are only two countries that bearing their original names, which have existed for over two and half millennia; these are Persia (or Iran) and Armenia. The earliest appearance of the name Turkey in maps is around the fourteenth century, which is over 2000 years after Armenia. Georgia, as a union of the countries of Colchis, Iberia, Mingrelia, Imeretia etc. appeared during the early eleventh century, appearing on maps some 300 years later. As for the Republic of Azerbaijan, placed north of the Arax River, in that area such a country appears for the first time only in 1918. The historic Azerbaijan existed north-west of Iran, south of the Arax River, as a province of the Empire of Persia, whose people were of Indo-European origin and until the fifteenth century spoke dialects of Pahlavi language.

R. Galichian,
London/Yerevan 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԷԶԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. Նախաբան

Աւելի քան 2500 տարի է, որ հայերն անընդմէջ ապրել են Հայկական Բարձրաւանդակում և հարևան շրջաններում: Հնագոյն ժամանակներից այս երկիրը կոչւել է տարբեր անուններով, որոնցից են Ուրարտու, Նաիրի, Արմենիա, Հայաստան, Հայք և Թուրքոմանիա: Այս անունները կարելի է տեսնել տարբեր ժամանակաշրջանների քարտէզների, ձեռագրերի և փաստաթղթերի վրայ:

Հնագոյն քարտէզների և պատմութեան գրքերի մէջ Հայաստանը երբեմն առկայ է որպէս անկախ պետութիւն, երբեմն էլ բաժանւած և հարևան կայսրութիւնների գերիշխանութեան ներքոյ, բայց և այնպէս նրա անունը միշտ էլ յիշւում է՝ սկսած հին յունական, հռոմէական, իսլամական և այլ տեքստերից ու քարտէզներից մինչև այսօր:

Հայաստան անունը նոյնիսկ առկայ է պորտոլան քարտէզներում, որոնք պատրաստւում էին ծովագնացութեան համար և ընդհանրապէս ներկայացնում էին միմիայն մերձափնեայ քաղաքներն ու շրջանները, մինչդեռ Հայաստանը չունէր ոչ մի ծովափ կամ նաւահանգիստ: Հաւանաբար նրա անունը արևմտեան քարտէզագէտներին ծանօթ է եղել Ամստերդամում, Վենետիկում և այլ առևտրական կենտրոններում հաստատւած հայ վաճառականներից, կամ էլ Հայաստան երկիրը ճանաչւած է եղել որպէս արևելեան հնագոյն քրիստոնեայ մի պետութիւն: Գալով քրիստոնէական քարտէզագրութեանը, ապա Հայաստանը որպէս առաջին երկիր, որը 301 թւականին պետականօրէն ընդունեց քրիստոնէական կրօնը, այստեղ ունի իր կարևոր տեղը, քանի որ առաջին դարերից սկսած, հայերը հիմնւել են Երուսաղէմում և այսօր էլ առկայ են այնտեղ որպէս քրիստոնէական սրբավայրերի պահապաններից մէկը:

Քարտէզագրութիւնը, որն սկսւեց մի քանի գծով և շրջանակով, նկարւած կաւէ սալիկի կամ քանդակւած սալաքարերի վրայ, մինչ մեր օրեր հասնելն անցել է երկար և արկածալից ճանապարհ: Այսօւայ քարտէզը մարդկութեան ձեռքում կարևոր մի փաստթուղթ է և հետաքրքիր է իմանալ, թէ մեր նախնիները ինչպէ՞ս էին ընկալում դա և դրա մասին ի՞նչ կարծիք ունէին:

2. Սկզբնական շրջան

Հնագոյն քարտէզը, որը մեզ է հասել Բաբելոնեան կաւէ սալիկների վրայ փորագրւած՝ հիւսիսային Միջագետքի քարտէզն է, պատրաստւած շուրջ 3800թ. մ.թ.ա.: Դրանից յետոյ գալիս են հողամասերի սահմանների պլաններ, որոնք պատրաստւել են շուրջ 2300 տարի մ.թ.ա. և օգտագործւել Սարգոն թագաւորի կողմից՝ հարկեր հաւաքելու նպատակով:

Հնագոյն աշխարհացոյց քարտէզը Բաբելոնեան կաւէ մի սալիկ է, պատրաստած 600 տարի մ.թ.ա., որի վրայ նաև նշւած է Հայաստանը: Սա շրջանաձև մի քարտէզ է, որը նշում է երկիրը որպէս ծովերի մէջ լողացող սկաւառակ, որի կենտրոնում է գտնւում Բաբելոնը, շրջապատւած երկու այլ երկրներով, որոնք կոչւում են Ասորեստան և Արմենիա (Ուրարտու)[13]: Պատկերւած է Եփրատը, որն ակունք առնելով Հայաստանի լեռներից, անցնում է Բաբելոնի միջով ու Միջագետքի ճահճուտներով և թափւում Պարսից ծոցը: Այստեղ ծովերը նշւած են որպէս «դառը ջրեր», իսկ աշխարհի շուրջը պատկերւած են եօթ կղզիներ, որոնց մասին բացատրութիւններ կան սալիկի միւս կողմում: (Տես պատ. 1Ո և 1ա):

Սրան յաջորդող պատմական ժամանակաշրջաններից մեզ են հասել պապիրուսի պատառիկներ, որոնց վրայի գծագրութիւնները նմանում են քաղաքների և շրջանների յատակագծերի: Պահպանւել է նաև եգիպտական փարաւոններից մէկի դագաղի վրայ արւած քանդակը, որը նշում է Նեղոս գետի ուղին Եգիպտոսի միջով և նման այլ քանդակներ:

Բրիտանիայի Ստոնհենջ կոչւող կառոյցի և Հայաստանի Սիսիանի շրջանի Զօրաց Քարերը կառուցող մեր նախնիների աշխարհագրական, աստղագիտական և քարտէզագրական գիտելիքների մասին մենք չունենք որևէ ստոյգ տեղեկութիւն կամ փաստաթուղթ: Այս երկու կառոյցները, որոնք ունեն նմանութիւններ, ներառեալ նաև Մեծամօրի աստղադիտարանը, մեզ հաւաստիացնում են, որ մեր նախնիները դիտել և քննարկել են աստղերն ու տիեզերքը, որոնցով նրանք կողմնորոշւել են և հաւանաբար բացատրել բնութեան որոշ տարրերը:

Ըստ յոյն պատմիչ Հերոդոտոսի, որն ապրում էր մ.թ.ա. 489-425 թւականներին նաև ճանաչւած աշխարհագրագէտ էր, Միլեթացի Արիստագորասը Սպարտայում ցուցադրել էր երկաթեայ սալիկի վրայ իր փորագրած քարտէզը, որի օգնութեամբ նա առաջարկում էր կազմակերպել արշաւանք դէպի Պարսկաստան: Քարտէզի վրայ նշւած էին Իոնիան, Լիդիան, Փռիւգիան, Կիլիկիան, Կիպրոսը և վերջապէս Հայաստանն ու Շոշ քաղաքը, որը Պարսից թագաւորանիստ քաղաքն էր: Ըստ տրւած բացատրութիւնների, քարտէզը պէտք է լիներ Միջին Արևելքի, Իրանի և Հայաստանի տարածաշրջանը ցուցադրող մի քարտէզ: (Տես պատ. 3)

Հնագոյն ճանապարհորդական փաստաթղթերից մէկն է եգիպտական փարաւոն Սեթի (1366-1333 մ.թ.ա.) մասին գրւած պապիրուսը, որը յիշատակում է նրա յաղթական վերադարձը Սիրիայից: Բայց և այնպէս այս դարաշրջաններից որևէ փաստաթուղթ, որին կարելի է «քարտէզ» կոչել, մեզ չի հասել:

3. Յոյները, Ալեքսանդրիայի դպրոցը և Հայաստանը

Հայաստան անունը յիշատակւում է դեռ վաղ յունական շրջանի տարբեր փաստաթղթերում: Միլեթացի Անաքսիմանդրոսը (611-547 մ.թ.ա.), որն ապրել է Դասական Յունաստանի ժամանակաշրջանում, համարւում է

[1] *Այս կաւէ սալիկը գտնւում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում:*

քարտէզագրութեան հիմնադիրը: Նա առաջինն էր, որ պատրաստեց իր ճանաչած աշխարհի ընդհանուր քարտէզը: Քարտէզն, իհարկէ, մեզ չի հասել, բայց նրա գրւածքներից հնարաւոր է իր պատկերած քարտէզը վերականգնել: Ուրիշ մէկը, որ ճանապարհորդել է Աքեմենեան Կայսրութեան տարածքում, նոթագրելով իր ճանապարհորդութիւնները՝ Հեկատէոսն էր, որն ապրել է մ.թ.ա. 550-480 թւականներին: Հեկատէոսը նաև պատրաստել էր մի աշխարհացոյց քարտէզ, ուր նա օգտւել է Անաքսիմանդրոսի հիմունքներից: Բայց և այնպէս, չնայած որ հնագոյն գրականութեան մէջ կան շատ բացատրութիւններ տարբեր երկրների անունների, տեղերի, ճանապարհների և քաղաքների մասին, մինչև այժմ դրանց ժամանակակից ոչ մէկ քարտէզ մեզ չի հասել: (Տես պատ. 2)

Յոյն փիլիսոփայ Պիւթագորասն իր փիլիսոփայութեան դպրոցը հիմնել էր Կոլոնայում մ.թ.ա. 523 թւին, որտեղ նա գրի է առել իր աստղագիտական, փիլիսոփայական, ֆիզիկական տեսութիւններն ու դիտողութիւնները, ներառեալ երկրագնդի գնդաձև լինելու տեսութիւնը, բայց մեզ յայտնի չէ թէ նա ինչպէ՞ս է հասել այդ եզրակացութեանը: Էրատոսթէնէսը, որն ապրել է Պիւթագորասից յետոյ, մ.թ.ա. 276-194 թւականներին, ընդունելով երկրի գնդաձև լինելու տեսութիւնը, աւելացրեց, որ երկիրը տիեզերքի կենտրոնն է և բոլոր երկնային մարմինները պտտւում են նրա շուրջը: Նա իր ճանաչած աշխարհը հասարակածի միջոցով բաժանեց երկու մասի, իր պատկերածի վրայ աւելացնելով երևակայական միջօրէական գծեր, որոնք անցնելով երկրագնդի բևեռներով ուղղահայեաց կերպով կտրում էին հասարակածը: Սրանք քարտէզագրութեան մէջ մինչև այսօր գործածւող նոյն միջօրէական գծերն են:

Էրատոսթենէսի տեսութեան համաձայն, բնակելի աշխարհը, որը յունարէնով կոչւում էր “οικουμενης” (օիկումենէ, բառացի՝ «բնակեցւած» կամ «մարդաբնակ աշխարհը») կազմւած է երեք մայր ցամաքներից՝ Եւրոպա, Ասիա և Լիբիա (Աֆրիկա), որոնք շրջապատւած են ովկիանոսով: Ճանաչւած աշխարհի ծայրամասերն էին արևելքում Տապրոբանա կղզին (Ցէյլոնը), արևմուտքում Իսպանական Իբերիան, հիւսիսում Տիւլէ կղզին (Իսլանդիան) և հարաւում Կինամոնի կղզիները:

Նա ենթադրում էր, որ Իբերիայից (Իսպանիա) ուղղակի դէպի արևմուտք նաւարկելով կարելի է հասնել Հնդկաստան, այսպիսով շրջանցելով աշխարհը: Ըստ նրան՝ ճանաչւած աշխարհի լայնքը մէկ ծայրից մինչև միւսը 12,500 կիլոմետր է, իսկ երկրագնդի մնացորդ 2/3 մասը ովկիանոս է: Իսկ աշխարհի հարաւից մինչև հիւսիս տարածութիւնը նա հաշւում էր շուրջ 14,000 կիլոմետր: (Տես պատ. 4)

Ըստ Էրատոսթենէսի, երկրագնդի քարտէզը համեմատաբար սիմետրիկ տեսք ունի, բաժանւած ինքնակամ ցանցով, որի վրայ տեղերի հեռաւորութիւնները նշւած են մօտաւոր չափերով: Հիպպարկոսը նրա այս բացատրութիւնները քննադատում էր, ասելով թէ աշխարհագրական աշխատութիւնը պահանջում է աւելի լուրջ գիտական և ճշգրիտ մօտեցում, որը պակասում է Էրատոսթենէսի աշխատութիւններում:

Էրատոսթենէսի ամենամեծ ներդրումը աշխարհագրութեան և քարտէզագրութեան ասպարէզներում, նրա՝ երկրագնդի տրամագիծը չափելու հաշւարկն է: Հիմնւելով Ալեքսանդրիա և Սէյենէ (Ասուան) քաղաքների հեռաւորութեան վրայ, որը հաշւում էր 800 կիլոմետր, և ապա չափելով երկու քաղաքներում ուղղահայեաց տեղադրւած միաչափ ձողերի կէսօրւայ արևի գցած ստւերների երկարութիւնը, նա հաշւարկել է, որ երկու ուղղահայեաց ձողերի կազմած անկիւնը հաւասար է ամբողջական շրջանի 1/50-րդ մասին: Հետևաբար երկրագնդի շրջագիծը նա հաշւում է որպէս 50 x 800 = 40,000 կիլոմետր: Այս թիւը զարմանալիօրէն ճշգրիտ է, եթե չհաշւենք երկրագնդի մասնակի ձւաձև լինելու պարագան:

Աշխարհագրութեան հսկաներից մէկն է Ստրաբոնը, ծնւած Պոնտոսի Ամասիա քաղաքում (մ.թ.ա. 63-ից մինչև 24 թւական): Նա կատարել է բազմաթիւ ճանապարհորդութիւններ և աշխատել Ալեքսանդրիայի յայտնի գրադարանում: Այս գրադարանը հիմնադրւել էր մ.թ.ա. 3-րդ դարում, եգիպտական Պտղոմէոս փարաւոնների իշխանութեան օրօք: Գրադարանը պարունակում էր աւելի քան 490,000 ձեռագիր և դասական աշխարհում ամենամեծն էր: Դրա առաջին գրադարանապետերից էր փիլիսոփայ և աշխարհագրագէտ Էրատոսթենէսը: Այս հսկայ հաւաքածուն ընդգրկում էր բազմատեսակ գրականութիւն, սկսած թւաբանութիւնից, փիլիսոփայութիւնից մինչև բժշկութիւն և աշխարհագրութիւն, որոնք բերւում էին աշխարհի տարբեր ծայրերից յատուկ գնորդների միջոցով: Ալեքսանդրիայի կւսակալներից մէկը, Պտղոմէոս Էւերգեդէսը պարզ ձև էր մշակել գրադարանը հարստացնելու և կատարելագործելու համար: Նա կարգադրել էր, որ Ալեքսանդրիա եկող բոլոր ճանապարհորդների ունեցած գրքերը բռնագրաււեն քաղաքի դարպասների մօտ, ապա այս գրքերն ուղարկւում էին գրադարան, ուր դպիրներիը անմիջապէս դրանք արտագրում էին և արտագրածը վերադարձնում տիրոջը, բնօրինակը պահպանելով գրադարանում: (Տես պատ. 5)

Ստրաբոնի աշխատանքի հատորները գրւել են մեր թւականութեան երկրորդ տասնամեակի ընթացքում և համարեա ամէն ինչ, որ գիտենք նրա նախորդների աշխարհագրութեան և քարտէզագիտութեան գործերի մասին, մեզ են հասել Ստրաբոնի հատորների միջոցով, որը կոչւում է «Աշխարհագրական տեսութիւն»[2], կամ էլ պարզապէս՝ «Աշխարհագրութիւն»: Գրքի գլուխներից մէկը յատկացւած է Հայաստանին, ուր նա խօսում է Հայաստանի աշխարհագրութեան, պատմութեան և ժողովրդի մասին: Ստրաբոնի հատորները հասել են մեզ, բայց նրա գործածած աղբիւրների ձեռագրերը ոչնչացւել են Ալեքսանդրիայի գրադարանի հրդեհների ընթացքում[3] և ընդմիշտ կորել:

Նախքան Ստրաբոնը գոյութիւն ունեցած աշխարհագրական դիտողութիւնները, տեսութիւնները և եզրակացութիւնները մեծ մասամբ կապւած էին արեգակնային համակարգի, լուսնի և գիշերային երկնքի և համաստեղութիւնների հետազօտութիւններին, ինչը նաև շարունակւում է ներկայում: Գիտնականներն այսօր էլ շարունակում են նոյնը, առանց բաւարար ուշադրութիւն դարձնելու հէնց իրենց իսկ շեմքին կատարւող իրադարձութիւններին ու երկրագնդի վրայի բնական և աշխարհագրական իրավիճակին: Այս անգամ էլ Ստրաբոնն էր, որ խնդրի առարկա դարձրեց աշխարհագրական կէտերի համեմատական դիրքերն ու հեռաւորութիւնները և այսպիսով ժամանակի գիտնականների ուշադրութիւնը գրաւելով դէպի այս նիւթը, աշխարհագրութիւնն ու քարտէզագրութիւնը դարձրեց կարևոր գիտական ասպարէզներ: Հենց նրա հետևորդներն էին, որ առաջին անգամ լինելով ենթադրեցին, որ նոյնիսկ հնարաւոր է, որ երկրագունդը իրենց ճանաչած տիեզերքի կենտրոնը չլինի, ոչ էլ դա լինի արեգակը, որը նրանց աչքում միմիայն մեկ ուրիշ հրագունդ էր:

Ստրաբոնի կարծիքով աշխարհագրութեան հիմնադիրը Հոմերոսն էր, քանի որ Իլիականը և Ոդիսականը շարադրելիս, հիմնւելով իր ունեցած գիտելիքներին, նա կարողացել էր ընթերցողին ներկայացնել շատ մանրակրկիտ և ճշգրիտ աշխարհագրական տեղեկութիւններ: Գալով ճանաչւած աշխարհին, Ստրաբոնը համամիտ էր Էրատոսթէնէսի տեսութեանը և նշած սահմաններին:

Հին յոյներն առաջինն էին, որ սկսեցին գործածել արեգակնային ժամացոյցը՝ «գնոմ»ը, որով նրանք որոշում էին տւեալ վայրի աշխարհագրական լայնութիւնը, չափելով ուղղահայեաց ձողի գցած ստւերի երկարութիւնը: Այս գործիքը ապագայում զարգացաւ հասնելով աստրոլաբին, որի պարզ տարատեսակը գործածւում էր մեր թւականութեան սկզբնական շրջանում, իսկ աւելի բարդ տեսակները, բազմաթիւ անիւներով, բաժանումներով և այլն

[2] *Անգլերէն թարգմանութիւնը Ա .Համիլտոնի և Վ. Ֆալքոնիրի, հրատարակւած Լոնդոնում, 1856-ին:*

[3] *Գրադարանն առաջին անգամ հրդեհւել է մ.թ.ա. 47-ին, ապա մնացած ձեռագրերը վառել են Կեսար Աուրելիոսի զորքերը 273 թւականին, իսկ գործը լրացրել է Խալիֆա Օմարը, 642 թւականին:*

գործածւում էին նոյնիսկ մինչև 17-րդ դարը: Բարդ աստրոլաբները, որոնք այսօրեայ սէքստանտների և թեոդոլիտների նախորդներն էին, բաւական զարգացած սարքաւորումներ էին, որոնց գործածելը դիւրին չէր, բայց սրանցով կարելի էր չափել տարբեր երկնային մարմինների անկիւնները և այլն: (Տես պատ. 31)

Ստոիկ փիլիսոփայ Ապամէացի Պոսէյդոնիոսը պատկանում է Ստրաբոնին յաջորդող քարտէզագէտների սերունդին: Առաջին դարում նա իր փիլիսոփայական դպրոցն ունէր Ռոդոս կղզում: Իր աշխատանքների մէջ նա աշխատել է բացատրել երկրագունդը և արեգակնային համակարգը և նոյնիսկ ձեռնարկել է երկրագնդի շրջագծի չափումը, այս անգամ հիմնուելով աստղերի և ոչ թե արեգակի վրայ: Նա իր հաշւարկները հիմնել է Ռոդոսի և Ալեքսանդրիայի միջև եղած հեռաւորութեան և երկու քաղաքների անկիւնների վրայ: Բայց հաշւի առնելով ծովային տարածութիւնը չափելու ոչ ճշգրիտ միջոցները և անկիւնները չափելու մէջ կատարւած փոքր, բայց ազդեցիկ սխալները, նրա ստացած արդիւնքները միանման չէին: Պոսէյդոնիոսի հաշւարկները նրան տւեցին երկու տարբերակներ՝ մէկը 38,000 կիլոմետր էր, իսկ միւսը 29,000 կիլոմետր: Նա սկզբում եզրափակեց իր հաշիւները՝ վերցնելով բարձր թիւը՝ 38,000-ը, բայց հետագայում որոշեց փոխել և հիմք վերցնել 29,000-ը[4]: Աւելի քան 17 դար յետոյ, 1630 թւականին ֆլամանդացի աշխարհագրագէտ Պիտեր Բերտիուսը Պոսէյդոնիոսի բացատրութիւնների վրայ հիմնւելով վերակառուցեց նրա բացատրած երկրագունդը, ըստ որի դա ձւաձև էր և բնակելի աշխարհը՝ «օիկումենէ»ն, զբաղեցնում էր երկրագնդի տարածքի կէսը, իսկ մնացորդը ծածկւած էր ովկիանոսով:

4. Մարինուսը, Պտղոմէոսը և Հայաստանը

Հնագոյն ժամանակների կարևորագոյն աշխարհագրագէտներից էր Թիրացի Մարինուսը (շուրջ 130-70 մ.թ.ա.) որն ապրում էր Ալեքսանդրիայում և իր տրամադրութեան տակ ունէր հանրայայտ գրադարանը: Ասւում է, որ Մարինուսը պատրաստել էր մի Աշխարհացոյց քարտէզ, որը տարիներ շարունակ նա լրացնում էր և ճշգրտում: Նրա կարևորագոյն աշխատանքներից էին աշխարհագրութեան հատորները, որոնք տեղեկութիւններ էին հաղորդում զանազան երկրների, շրջանների, քաղաքների, լեռների և գետերի մասին, բայց այս գրքի ամենագլխաւոր պակասութիւնը, ըստ Պտղոմէոսի, տեղերի աշխարհագրական կոորդինատների պակասն էր: Այստեղ տրւած էին որոշ տեղերի աշխարհագրական լայնութիւնները, միւսների երկայնութիւնները, որոնք լաւագոյն դէպքում ենթադրական թւեր էին: Յաճախ գոյութիւն չուներ որևէ կոորդինատ, որը քարտէզում ճշտէր տւեալ վայրի դիրքը և տեղը: Դժւար է պատկերացնել, թէ Մարինուսն այդ հիման վրայ ինչպէ՞ս կարող էր պատրաստել որևէ քարտէզ: Յամենայն դէպս, եթէ ժամանակին գոյութիւն ունեցել են քարտէզներ, ապա դրանցից ոչ մէկը մեզ չի հասել:

Հնադարեան քարտէզների բացակայութեան և մեզ չհասնելու պատճառներից կարող է լինել այն, որ դրանք գծագրւում էին մագաղաթի կամ պապիրուսի վրայ, որոնք դիմացկուն նիւթեր չեն և գործածութեան հետևանքով մաշւում են ու ոչնչանում: Չնայած որ հնագոյն ժամանակներից որոշ գրաւոր տեքստեր մեզ հասել են, սակայն դրանց վերաբերող քարտէզները չեն գոյատևել: Միայն մի քանի քարտէզներ, որոնք փորագրւած են եղել քարէ դագաղների կամ էլ կաւէ սալիկների վրայ, դիմանալով ժամանակի բոլոր փորձութիւններին, գոյատևել են և հասել մինչև մեր ժամանակները:

Հին աշխարհի ամենանշանաւոր քարտէզագէտն ու աշխարհագրագէտն էր ալեքսանդրիացի Կլաւդիոս Պտղոմէոսը, որն ապրել է 90-168 թւականներին: Նա աստղագէտ էր ու թւաբանագէտ և այս նիւթերի մասին ունի մեծ քանակութեամբ աշխատութիւններ, բայց նրա կարևորագոյն գործն է ութ հատորանոց «Աշխարհագրութիւն»ը, որի տեքստը մեզ հասել է ամբողջութեամբ: Այս աշխատութեան առաջին հատորի մէջ Պտղոմէոսը բացատրում է, թէ ի՞նչ ձևեր և ճանապարհներ կարելի է օգտագործել տիեզերքը և երկրագունդը ուսումնասիրելիս և ինչպէս որոշել տւեալ վայրի կոորդինատները: Նրա առաջարկած մեթոդներից մէկ մասը գործածւում է ընդհուպ մինչև այսօր: Այստեղ նա խօսում է նաև Մարինուսի մասին և քննադատում նրա աշխատանքներն ու անուշադրութիւնը, որը նա ցուցաբերել է աշխարհագրական գիտութեան հանդէպ:

Պտղոմէոսի աշխատութեան եօթերորդ հատորի վերջում և ութերորդ հատորում նա բացատրութիւններ է տալիս քարտէզագրութեան և աշխարհամասերի ու երկրների սահմանների ու բաժանումների մասին: Մնացած հատորները յատկացւած են ճանաչւած աշխարհի աւելի քան 8000 վայրերի բացատրականներին ու կոորդինատներին: Սրանք բաժանւած են գլուխների՝ ըստ երկրների: Ամէն գլխի սկզբում տրւած է երկրի աշխարհագրական նկարագրութիւնը, կարևորագոյն սարերի ու գետերի անունները, հարևան երկրների անունները, ապա երկրի կարևոր քաղաքների անուններն ու նրանց աշխարհագրական կոորդինատները: Քաղաքների տեղանունները տրւած են ըստ իր ժամանակի յունական աղբիւրների և յաճախ տարբերւում են մեզ ծանօթ և ժամանակակից տեղանուններից:

Այս հատորներում Հայաստանին վերաբերող տեքստը, որը գտնւում է հինգերորդում, բաժանւած է երկու մասի: Փոքր Հայքի քաղաքների ցուցակը տրւած է «Ասիայի առաջին քարտէզ» գլխում, որը պարունակում է 79 տեղանուններ, որոնցից կարևորներն են Մելիտանան (Մալաթիան), Նիկոպոլիսը, Սատալան (Սատաղը) և Կոմանա: Մեծ Հայքի մասին գրւած է «Ասիայի երրորդ քարտէզ» գլխում, որտեղ տրւած են 85 տեղանուններ, որոնցից ամենակարևորներն են Արտաշատը, Արմաւիրը, Տիգրանակերտը, Արշամաշատը և Տուշպան (Վանը): Ըստ Ջոն Շարդանի, Պտղոմէոսի տեքստի մէջ նշւած «Թերւա» անունն այսօրեայ Երևանն է[5]: (Տես պատկեր 38-ից մինչև պատ. 42)

Ինչպէս վերը նշւեց, Պտղոմէոսը խիստ քննադատօրէն է մօտենում Մարինուսի աշխատանքներին, յատկապէս անուշադրութեան և մանրամասնութիւնների բացակայութեան պատճառով: Ըստ երևոյթին, նա իր աշխատանքների մէջ օգտագործել է Մարինուսի աշխատութիւնները, բայց դրանք լրացրել է իր գիտելիքներով և հաւաքած տեղեկութիւններով, և ապա ամբողջացւած աշխատանքը ներկայացրել իր գրքում:

Պտղոմէոսի մարդաբնակ աշխարհի քարտէզը արևմուտքում սկսւում է Իսպանիայից և Իռլանդիայից հասնելով մինչև Չինաստան, իսկ հիւսիսում Իսլանդիայից մինչև Եթովպիա և Յեյլոն կղզին: Բայց նա այնքան հեռատես էր, որ իր ճանաչած աշխարհը չէր սահմանափակել և դրա ծայրամասերը թողել էր բաց՝ ապագայի աշխարհագրագէտների համար, որպէսզի նրանք կարողանան իրենց նոր յայտնաբերած երկրներն ու տեղեկութիւններն այնտեղ աւելացնել: (Տես պատ. 32 և 36)

Իր տեքստի մէջ Պտղոմէոսը յաճախ անդրադառնում է նրան, թէ ինչպէս կարելի է իր պատրաստած քարտէզները լրացնել և ճշտել ճանապարհորդներից ստացած նոր տեղեկութիւններով: Հետևաբար, հիմնւելով այս բացատրութիւններին, յանգում ենք այն եզրակացութեանը, որ Պտղոմէոսը իրականում հնարաւոր է որ գրքին կից պատրաստած լինէր քարտէզներ: Պտղոմէոսի Աշխարհագրութեան վրայ հիմնւած քարտէզներում հիւսիսը վերն էր և քարտէզները յաճախ ունէին դէպի ներս թեքւած կողմեր: Ըստ «Աշխարհագրութեան» և դրան կից քարտէզների բացատրութեան, Պտղոմէոսը աշխարհը բաժանում է երեք մայր ցամաքների՝ Ասիա, Եւրոպա և Աֆրիկա, որոնք իրենց հերթին բաժանւած են տարբեր քարտէզների: Ըստ նրան, գրքին կից կան հետևեալ քարտէզները.

[4] *Այսօրւայ հաշւարկներով միջին թիւը շուրջ 40,000 կիլոմետր է:*

[5] *Սըր Ջոն Շարդան, «The Travels into Persia», Լոնդոն, 1686, առաջին հատոր, էջ 244:*

- Աշխարհի քարտէզը, շրջապատւած տարբեր ուղղութիւններից փչող քամիներով, բաժանւած եղանակային գոտիների
- Եւրոպան, բաժանւած 10 քարտէզի
- Աֆրիկան, բաժանւած 4 քարտէզի
- Ասիան, բաժանւած 12 քարտէզի

Հայաստանի անունը առկայ է այս քարտէզներից հինգի մէջ:

Պտղոմէոսի «Աշխարհագրութեան» անգլերէն թարգմանութեան նախաբանում Ժոզեֆ Ֆիշերը[6] գրում է, որ այս գրքի 26 քարտէզները հաւանաբար հէնց իր՝ Պտղոմէոսի գծածներն են եղել, բայց աշխարհի քարտէզը մեծ հաւանականութեամբ ալեքսանդրիացի աշխարհագրագէտ Ագաթադէմոնի կամ էլ նոյնիսկ Մարինուսի պատրաստած քարտէզն է: (Տես պատ. 32, 36)

Ըստ երևոյթի քարտէզները պատրաստել են հիմնւելով 8000-ից աւելի վայրերի աշխարհագրական կոորդինատներին, կամ էլ հակառակը՝ աշխարհագրական կոորդինատները և տեղանունները վերցւել են արդէն իսկ պատրաստւած քարտէզներից: Երկու դէպքում էլ կարելի է եզրակացնել, որ հատորներին կից եղել են քարտէզներ:

Ամենամեծ սխալը, որ Պտղոմէոսն իրեն թոյլ է տւել, դա աշխարհի շրջագծի երկարութիւնն է: Նա Էրատոսթէնէսի 40,000 կիլոմետր հաշւարկը չեղեալ համարելով վերցրել է Պոսէյդոնիոսի և Մարինուսի հաշւարկած 28,000 կիլոմետրը և իր բացատրած աշխարհի տարածքը հաշւել այս թւով: Իսկ իր քարտէզների և աշխարհագրական կոորդինատների միւս պակասութիւնն այն էր, որ դրանք պատրաստելիս Պտղոմէոսը պարտաւորւած էր հիմնւել առևտրականների, ճանապարհորդների և ուխտաւորների տւած բացատրութիւններին ու չափագրութիւններին, որոնք յաճախ այնքան էլ ճշգրիտ չէին: Այս բոլորով հանդերձ Պտղոմէոսի «Աշխարհագրութիւն»ը քարտէզագրութեան և աշխարհագրութեան ասպարէզներում մի այնպիսի հսկայական կարևորութիւն ունեցող աշխատանք է, որ իր ստեղծման օրից 1300 տարի յետոյ՝ մինչև 15-16-րդ դարերը, ժամանակի քարտէզագէտները իրենց առաջին ատլասները պատրաստելիս աւելի հիմնւում և վստահում էին այս աշխատութեանը, քան թէ ժամանակակից նաւարկողներից ստացած նոր տեղեկութիւններին կամ էլ նրանց ձեռքով պատրաստւած նոր ծովային քարտէզներին:

«Աշխարհագրութիւն»ի հատորներից մեզ հասել են աւելի քան 40 ձեռագիր տեքստի օրինակներ, որոնցից մէկ մասը կիսատ է, իսկ տպագրութեան գիւտից յետոյ՝ 1477-ից մինչև 1600-ականները, այս գիրքը հրատարակւել է աւելի քան 50 անգամ: Գրքի հրատարակողներից են ճանաչւած քարտէզագէտներ Դոննուս Գերմանիոսը, Սեբաստիան Մինստերը, Մարտին Վալդզէմիւլլերը, Բեռլինգերին և այլն: Ամէն հրատարակիչ իր քարտէզները գծագրելիս հիմնւել է ձեռագրի վայրերի բացատրութիւնների ու տւեալների վրայ, այնպէս որ, չնայած քարտէզներն իրարից տարբերւում են, սակայն հիմնականում շատ բաներով նման են իրար և նոյնիսկ այսօր այդ քարտէզներից որևէ մէկը դիտելիս կարելի է անմիջապէս գուշակել թէ ո՞ր աշխարհագրական շրջանն է ցուցադրւած այնտեղ: Ընդհանրապէս այն ամէնը, ինչ մենք այսօր գիտենք որպէս արևմտեան քարտէզագրութիւն, հիմնւած է այս յոյժ կարևոր աշխատութեան վրայ: (Տես պատ. 21)

Ինչպես նշւեց, Պտղոմէոսի քարտէզները մեզ չեն հասել, բայց ամենահին պտղոմէոսեան քարտէզը որ հասել է մեզ, 11-րդ դարի օրինակն է, որը հաւանաբար Պտղոմէոսի քարտէզի բնօրինակից է արտագրւած: Որոշ յոռետես գիտնականներ նոյնիսկ մեզ հասած քարտէզները բոլորովին Պտղոմէոսի գործը չեն համարում, այլ Ալեքսանդրիացի Ագաթադէմոնինը, որոնք իբր թե գծագրել են երկրորդ և 11-րդ դարերի միջև:

Պտղոմէոսեան քարտէզները պարզ են և չունեն զարդարուն գլխագրեր և վերնագրեր, որոնք ընդհանրացած էին 15-16րդ դարերի որոշ քարտէզներում: Նրա աշխատութեան հիման վրայ 15 կամ 16-րդ դարերի ընթացքում պատրաստւած և տպագրւած ատլասներից մէկ մասի քարտէզները գունաւոր են, իսկ դրանցից որոշները նոյնիսկ տպագրւած են մագաղաթի վրայ:

5. Միջնադարեան հայկական քարտէզագրութիւնը

Հայերէն առաջին աշխարհագրական աշխատութիւնը «Աշխարհացոյց»ն է, գրւած 591-ից մինչև 610-ը, որը որոշ գիտնականներ վերագրում են միջնադարեան պատմահայր Մովսէս Խորենացուն[7], իսկ մեծամասնութեան կարծիքով դրա հեղինակն է հայ թւաբանագէտ և աշխարհագրագէտ Անանիա Շիրակացին[8]: Այս աշխատութեան հիմքն է Պապուս Ալեքսանդրիացու տեքստը, որն իր հերթին հիմնւած էր Պտղոմէոսի «Աշխարհագրութիւն»ի վրայ: «Աշխարհացոյց»ը Պապուսի տեքստից բացի ունի շատ աւելի և մանրակրկիտ տեղեկութիւններ և տւեալներ Հայաստանի, Պարսկաստանի և Կովկասեան այլ երկրների մասին: Իրականում այս յաւելեալ տեղեկութիւնները զբաղեցնում են աշխատութեան մեծագոյն մասը: Գիրքը գրւած է գրաբարով և թարգմանւած աշխարհաբարի[9], լատիներէնի[10], ֆրանսերէնի[11], գերմաներէնի[12] և վերատպւած է անգլերէն նախաբանով[13]: Գիրքն ունի երկու տարբերակ, որոնցից մէկն աւելի համառօտ է: Չնայած այն պարագային, որ գրքից մեզ են հասել մի քանի ձեռագիր, ինչպէս նաև տպագիր օրինակներ, ցաւօք դրանցից ոչ մէկը չունի քարտէզ:

Երևանի Մատենադարանում կան մի քանի միջնադարեան ձեռագրեր, որոնք պարունակում են շրջանաձև կամ ձւածիր եւրոպական T-O տարատեսակի քարտէզներ: Սրանք հիմնականում 11-14-րդ դարերի ձեռագրերում են գտնւում, որոնց մէջ նկատելի է նաև իսլամական քարտէզագրութեան ազդեցութիւնը: Այս քարտէզները ներկայացնում են քարտէզագրութեան զարգացման մի այլ փուլը, որը մեզ հասցրել է մինչև 17-րդ դարում հայերէն քարտէզների տպագրութիւնը: (Տես պատ. 17)

18-րդ դարում պատմական Հայաստանի առաջին քարտէզը փորագրւեց և տպագրւեց Վենետիկի Սուրբ Ղազարոս Միաբանութիւնում, հիմնւելով «Աշխարհացոյց»ի տւեալներին: Այս քարտէզը ներկայացնում է պատմական Հայաստանի տարածքը՝ նշելով նահանգների անունները և այլ աշխարհագրական մանրամասնութիւններ: (Տես պատ. 97)

6. Քրիստոնէական քարտէզագրութիւնը և Միջնադարը

Ինչպէս սպասելի է, Հայաստանի անունը առկայ է քրիստոնէական քարտէզագրութեան բոլոր տարբերակներում, քանի որ սա Անատոլիայից դէպի արևելք գտնւող շրջանի միակ քրիստոնեայ երկիրն էր: Քրիստոնէական քարտէզագրութեան մէջ Հայաստանը յաճախ պատկերւում է ըստ Հին Կտակարանի՝ Արարատով և Նոյեան տապանով: Քարտէզներից մի քանիսի մէջ երկրային Դրախտը՝ Եդեմը գտնւում է Հայաստանի տարածքում, կամ էլ նրա անմիջական հարևանութեան մէջ:

Քարտէզագրութեան մէջ հին հռոմէացիներն ունէին իրենց տարբեր նպատակը: Քարտէզը նրանց համար ճանապարհները որոշող և ցուցադրող

---

[6] *Կլաուդիոս Պտղոմէոս, Geographia, թարգմանութիւն Է.Լ. Ստիվենսոնի, 1932 թ., Նիւ Եօրք:*

[7] *Մովսէս Խորենացին ապրել է 5-րդ դարում:*
[8] *Անանիա Շիրակացին ապրել է 7-րդ դարում:*
[9] *Գ. Բ. Պետրոսյան, Անանիա Շիրակացի Մատենագրություն, Երևան 1979:*
[10] *Historiae Armenicae – Ուիսփոն, Լոնդոն 1736, գիրք III:*
[11] *Սան-Մարտին, Memoires Historiques et Gepgraphiques sur l'Armenie, t.II, Paris 1819 նաև Տեր Պ.Ա. Սուկրի, Սբ. Ղազար, Վենետիկ 1881:*
[12] *Ժ. Մարքւարտ, Բեռլին 1901:*
[13] *Պրոֆ. Ռոբերտ Հիւզեն, Դելմար, Նիւ Եօրք, 1995:*

փաստաթուղթ և միջոց էր, որն օգտագործւում էր Կեսարի զօրքը և, հետևաբար, հսկողութիւնը Հռոմէական կայսրութեան ամէն անկիւնը տարածելուն: Նրանց համար կարևոր էին քաղաքների և հանգրուանների միջև եղած հեռաւորութիւնների ճշգրիտ լինելը, իսկ նոյն վայրերի համեմատական աշխարհագրական տեղադրութիւնը Կեսարի բանակի համար այնքան էլ կարևոր չէր: Հռոմէական քարտէզի ամենալաւ նմուշն է այսպես կոչւած «Պոյտինգերեան քարտէզ»ը, որի բնագիրը հաւանաբար պատրաստւել է մեր թւականութեան առաջին դարում, և որը հին Հռոմէական Կայսրութեան ճանապարհների քարտէզն է 34 սմ լայնքով և 6.4 մ երկայնքով: Աուգսբուրգեցի Կոնրադ Պոյտինգերը 1508 թւականին[14] ձեռք է բերել այս քարտէզի 4-րդ դարի պատճէնը: Քարտէզը նշում է Հռոմից դէպի կայսրութեան բոլոր անկիւնները գնացող ճանապարհները, սկսած Մարաստանից մինչև Անգլիա, ներառեալ նաև Հայաստանը, որի քաղաքներից այստեղ կարելի է տեսնել Արտաշատը, Տիգրանակերտը, Բագաւանը (Ռագաունիա) և Ոստանը: Այս քարտէզը աշխարհագրական տեսակէտից ամբողջովին սխալ է, բայց կատարեալ կերպով ծառայում է իր նպատակին: (Տես պատ. 7)

Երբ քրիստոնէութիւնը հաստատւեց արևմուտքում և կրօնական գաղափարները սկսեցին իշխել, Հին Կտակարանի բացատրած աշխարհի ստեղծումը դարձաւ անժխտելի մի «փաստ»: Այս իրողութիւնը պատճառ դարձաւ, որ քարտէզագրութիւնն ու աշխարհագրութիւնը տուժեցին՝ ընկնելով կրօնի պարտադրած սահմանների միջև, միաժամանակ կորցնելով առաջադիմութեան միջոցներն ու ձգտումը: Երկրորդ դարից մինչև 15-րդ դարը, քրիստոնեայ աշխարհի քարտէզագրութեան մէջ կայ մի հսկայական վիհ, քանի որ մինչ այդ զարգացած գիտական տեսութիւնները մերժւեցին և նոր կրօնական ու աւետարանական հիմունքներ ունեցող «իրականութիւնները» գրաւեցին նրանց տեղը: Պտղոմէոսեան քարտէզներում արդէն իսկ նկատելի էր աշխարհի իրական քարտէզի նախագիծը, որը հիմքն է մեր այսօրւայ քարտէզագրութեան, բայց միջնադարեան քրիստոնեայ աշխարհի քարտէզներում, ընդհուպ մինչև 14-րդ դարը պատկերւած երկրագունդը իրականութիւնից շատ տարբեր էր:

Քրիստոնէութեան նախնական շրջանում եկեղեցին ուշադրութիւն չէր դարձնում աշխարհագրութեան և քարտէզների վրայ, բայց ամէն ինչ փոխւեց երբ 6-րդ դարում Կոզմա Անտիոքցին, հանրածանօթ «Կոզմա» անունով, սահմանեց եկեղեցու տեղագրութիւնը: Ըստ դրան, աշխարհը գնդաձևի փոխարէն դարձաւ տափարակ, որի մէջ երեք ցամաքամասերը շրջապատւած էին ովկիանոսներով: Սրան յաջորդեց Սեւիլիացի Իզադորի T-O տեսակի, նաև այսպէս կոչւած «վանական» քարտէզը (շուրջ 560-636), որը հրատարակւել է նրա *Էտիմոլոգիա* աշխատութիւնում: Յաջորդ հազար տարիների ընթացքում այս քարտէզը և դրա տարբերակները դարձան քրիստոնէական քարտէզագրութեան հիմքերը: (Տես պատ. 9)

Հաւատքի վրայ հիմնւած այս քարտէզները շատ պարզ էին ու անպաճոյճ: Սրանք կոչւում էին Սաղմոսարանի քարտէզներ, նաև ճանաչւած «T-O քարտէզ» անունով, որոնք երևան եկան միջնադարում: Այս քարտէզները, եթէ դրանց կարելի է այսպէս անւանել, պատկերում են երկրագունդը որպէս մի կլոր սկաւառակ (O տառը), որը ծովերով և գետերով բաժանւած է երեք մասի՝ T տառի ձևով, այստեղից էլ այս քարտէզների T-O անւանումը: Քարտէզներում արևելքը գտնւում է քարտէզի վերի մասում, ուր որ Երկնային Դրախտը՝ Եդեմն է: T տառի ուղղահայեաց գիծը Միջերկրական ծովն է, որը Եւրոպան բաժանում է Աֆրիկայից, իսկ հորիզոնական գծի ձախում Դոն և աջում Նեղոս գետերն են, որոնք առանձնացնում են Ասիան միւս մայր ցամաքներից: Այս քարտէզները ժամանակին շատ ընդհանրացած էին, բայց սրանցից մեզ հասել են ոչ մեծ քանակութեամբ տարբեր չափերի օրինակներ, սկսած մի քանի սանտիմետրից մինչև մի քանի մետր տրամագծերով: (Տես պատ. 13, 14, 18, 20 և 30)

[14] *Այդտեղից էլ քարտէզի անւանումը՝ «Պոյտինգերեան քարտէզ»:*

Ութերորդ դարում իսպանացի Բենեդիկտին վանական Բէատուս Լիբենացին ստեղծեց իր T-O տեսակի ձւածիր քարտէզը, որն աւելի զարդարուն տեսք ուներ: Այս տեսակը որդեգրւեց շատերի կողմից և այսպիսով հիմնադրւեց «Բէատուս» քարտէզների տարատեսակը: (Տես պատ. 15)

Ժամանակի ընթացքում այս քարտէզները զարգացան և սկսեցին նաև ներկայացնել երկրներ, քաղաքներ, կենդանիներ, բոյսեր ու զարդարանքներ: Այս տեսակի քարտէզների յոյժ կարևորներից են Գերմանիայի Էբսթորֆեան քարտէզը, որն ունէր 3.6 մետր տրամագիծ (ոչնչացւած Երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ) և Անգլիայի Հերէֆորդ քաղաքի Մայր Տաճարում գտնւող և 13-րդ դարում գծւած «Մապպա Մունդի»ն (աշխարհացոյց): Եթէ միջնադարեան քարտէզները համեմատենք նախաքրիստոնէական յոյների և ալեքսանդրիացիների պատրաստած քարտէզների հետ, ապա կտեսնենք հսկայական յետադիմութիւն, որն ապրեց քարտէզագրութիւնը քրիստոնէական միջնադարերում՝ գտնւելով կրօնի հսկողութեան ներքոյ: (Տես պատ. 15 և 36)

7. Իսլամական քարտէզագրութիւնը և Հայաստանը

Այն ժամանակ, երբ արևմտեան քարտէզագէտները պարտաւորւած էին մնալ կրօնի գծած սահմանների միջև, արևելքում՝ Պարսկաստանում և արաբական աշխարհում գիտնականներն ու ալքիմիկոսները շարունակում էին աշխատել կրօնական դոգմաներից զերծ պայմաններում: Չնայած որ միջնադարում արաբական գիտութիւններն ու բժշկութիւնը ապրում էին ծաղկուն շրջան, բայց քարտէզագրութիւնն ու աշխարհագրութիւնը դրանց զուգահեռ առաջադիմութիւնը չունէին:

Իսլամական քարտէզագրութեան մէջ իշխողն էր Բալխի դպրոցը, որն իր նախնական շրջանում հիմնականում սահմանափակւում էր իսլամական երկրներով, որոնք գտնւում են Պարսից ծոցի, Արաբական և Կարմիր ծովերի շրջանում, ինչպէս նաև Արևելեան Միջերկրականում, շրջանցելով քրիստոնեայ աշխարհը: Բացառութիւն են կազմում Հայաստանը, Ռուսաստանը և Բուլղարիան, որոնք լինելով նրանց անմիջական հարևանութեան մէջ, յաճախ նշւում են իսլամական քարտէզներում: Հետագայում իսլամական աշխարհացոյցները նշում էին նաև որոշ այլ եւրոպական երկրներ, ինչպիսին են Իսպանիան, Ֆրանսիան և Գերմանիան: (Տես պատ. 10-12, 19, 51, 57)

Իսլամական աշխարհի կարևոր քարտէզագէտներից են պարսիկ Աբու Ասհաղ Իբն Մոհամմադ ալ-Ֆարսին, ճանաչւած Ալ-Իսթախրի անունով (մահացած 957 թ. շրջանում), Սադիղ Իսֆահանին և Զաքարիա ալ-Ղազւինին (1203-1283) և աշխարհագրագէտ ու գիտնական Աբու Ռէյհան Բիրունին (973-1048), որը բնակւում էր Պարսկաստանում և յայտնի էր իր մի քանի ճանապարհորդութիւններով, յատկապէս դէպի Հնդկաստան, որոնց մասին նա գրել է բազմաթիւ գրքեր: Աւելի ուշ ժամանակներում հանրայայտ էր արաբ աշխարհագրագէտ Իսմաիլ Աբուլֆեդան (1273-1332), ում ազդեցութիւնը իսլամական և օսմանեան աշխարհագրութեան մէջ անժխտելի է:

Իսլամական աշխարհագրական գրականութիւնը պարունակում է մանրամասն տեղեկութիւններ երկրների, քաղաքների, ժողովուրդների ու նրանց սովորութիւնների ու լեզուների մասին, յաճախ առանց համապատասխան քարտէզների: Հայաստանը գտնւելով Պարսկաստանի Գիլան, Դէյլամ և Ատրպատական նահանգների հարևանութեան մէջ՝ յաճախ է տեղ գտնում իսլամական աշխարհագրական գրքերում ու քարտէզներում: (Տես պատ. 11, 12, 19, 23)

Աւելի ուշ ժամանակաշրջանում, որին կարելի է կոչել իսլամական քարտէզագրութեան Արաբ-Նորմանդական դարաշրջան, իսլամական քարտէ-

զագրութիւնն ապրեց աւելի ծաղկուն ժամանակներ: Այս շրջանի ամենայայտնի արաբ քարտէզագէտն է համարւում Ալ-Իդրիսին (1099-1166), որը ծնւել է Մարոկկոյում և կրթութիւն ստացել Իսպանիայում: Եւրոպայում և Ասիայում կատարած ճանապարհորդութիւններից յետոյ, նրա համբաւը պատճառ դարձաւ, որ Սիցիլիայի Ռոջեր Երկրորդ թագաւորը նրան հրաւիրեց աշխատելու իր արքունիքում: Թագաւորի համար նա պատրաստել է յատուկ արծաթեայ գլոբուս, քանդակւած աշխարհի ժամանակակից քարտէզով: Նա հեղինակն է աշխարհագրական հանրագիտարանի, որին կից կային Ասիայի, Եւրոպայի և Աֆրիկայի թւով 70 փոքրածաւալ քարտէզները: Քարտէզների օրինակներից մեզ հասել են մի քանի տարբերակներ, որոնք ցուցադրում են Իդրիսիի վարպետութիւնը որպես քարտէզագէտ: (Տես պատ. 16)

Օսմանեան աշխարհագրութեան կարևոր դէմքերից են Մեհմեթ Զիլլի իբն-Դերւիշը, ճանաչւած «Էվլիա Չելեբի» անունով (1611-1684, տիտղոսը նշանակում է Աստւածաշունք), որը ճանապարհորդել է և գրել իր տեսած երկրների և ժողովուրդների մասին, ինչպէս նաև Քյաթիբ Չելեբին (1609-1657), որն օսմանեան կարևորագոյն աշխարհագրագէտն է: Քյաթիբ Չելեբին գրել է հանրայայտ «Ջիհան Նիւմա» (Աշխարհի Հայելին), ձեռագիրը մնացել է անաւարտ, որը պարունակում է նաև մի քանի պարզ քարտէզներ: Օսմանցի առաջին հրատարակիչ Իբրահիմ Մութեֆերրիկան այդ գիրքը լրացրել է և հրատարակել, ներառնելով շուրջ 40 քարտէզ: Բոլոր քարտէզները հիմնւած են Չելեբիի, ինչպէն նաև Եւրոպական ժամանակակից այլ քարտեզների վրայ: Պետք է նաև նշել հայազգի Երեմիա Չելեբի Քէոմուրճեանին (1637-1695), որ ապրում և աշխատում էր Կոստանդնուպոլսում, և օսմանեան պատմութեան ու աշխարհագրութեան մէջ ունեցել է շատ մեծ և կարևոր ներդրումներ: (Տես պատ. 69-71 և 91)

8. Հայաստանը Պորտոլան ծովային քարտէզներում

Ինչպէս յիշւեց, պորտոլանները ծովագնացների համար պատրաստւած քարտէզներ էին և սպասելի չէր, որ Մեծ Հայքը (բուն Հայաստանը), լինելով ծով և նաւահանգիստ չունեցող երկիր, յիշատակւի այս քարտէզներում: Ինչ վերաբերում է Կիլիկիոյ Հայկական թագաւորութեանը, ապա սրա նաւահանգիստները և քաղաքները առկայ են Արևելեան Միջերկրականի բոլոր պորտոլաններում:

Վաղ միջնադարեան շրջանում, երբ արևմտեան աշխարհագրագէտներն ու քարտէզագէտները աշխատում էին իրենց գիտելիքներն ու տեսութիւնները համաձայնեցնել Սուրբ Գրքի թելադրութիւններին, նաւաստիներն ու ծովագնացները զբաղւած էին իրենց տեսած ծովերի և ափերի հետազօտութեամբ ու գծագրութեամբ: Այս աւանդութիւնների հիմք էր ծառայում յոյն ծովագնացների «պերիպլուս»ը՝ որը նշանակում է «ծովեզրերի և ափերի շուրջ կատարած ճանապարհորդութիւնների մատենագրութիւն»: Այս բառը իտալերէնով թարգմանւում է «պորտոլանո», և քանի որ սկզբնական շրջանում այս քարտէզները պատրաստւում էին հիմնականում իտալացի և կատալան ծովագնացների ձեռքով, իտալերէն բառը գտաւ ընդհանրացած գործածութիւն և մինչև այսօր ծովային քարտէզները կոչւում են պորտոլան քարտէզներ կամ էլ պարզապէս պորտոլաններ:

Պորտոլանները սովորաբար ծովափնեայ քաղաքների, նաւահանգիստների, գետաբերանների, ծոցերի, նեղուցների, ընդծովեայ արգէլքների ու ժայռերի և ափի մասին տալիս են մանրամասն տեղեկութիւններ, նշելով կողմնացոյցի և իշխող քամիների ուղղութիւնները: Ծովագնացին հետաքրքրող որևէ տեղեկութիւն, որը կարող էր նաւավարին օժանդակել կողմորոշելու և նաւարկելու՝ տրւում է հնարաւորին չափի մանրամասնութեամբ: Իսկ ծովափից ներս գտնւող վայրերի մասին երբեմն ոչ մէկ տեղեկութիւն էլ չի տրւում: Աշխարհագրական տեղեկութիւնների փոխարէն այստեղ պատկերւում են զարդարանքներ, քարտէզի վերնագրերն ու յիշատակարանները: Պորտոլանները նկարւում էին մագաղաթի վրայ և համարեա թէ միշտ գունաւոր էին, քանի որ գոյները նոյնպէս ծառայում էին հաղորդելու յաւելեալ տեղեկութիւններ, ինչպիսին են քաղաքների բարեկամ կամ թշնամի լինելն ու նրանց համեմատական չափերը և այլն:

Իտալական պորտոլանները պատրաստւում էին հիմնականում Վենետիկում, Ճենովայում և Անկոնայում: Սրանք սովորաբար Միջերկրական ծովի մէջ նաւարկութեան համար պատրաստւած քարտէզներ էին, իսկ Կատալան քարտէզները՝ որոնք պատրաստւում էին Բարսելոնայում և Մայորքայում, երբեմն պարունակում էին տեւեալներ մինչև Հնդկաստանի և Չինաստանի շրջանները, այսպիսով դառնալով աւելի նման աշխարհացոյց քարտէզների: Այս քարտէզները նոյնպէս տալիս էին բաւականին տեղեկութիւններ ծովից հեռու և ցամաքի ներսի մասերի վերաբերեալ, որոնք կարևոր էին հեռաւոր երկրներ ճանապարհորդող առևտրականների ու հետազօտողների համար:

Տարիների փորձից ելնելով նաւավարներն ու քարտէզագէտները յանգել էին այն եզրակացութեան, որ քամիներին կարելի է որակաւորել ըստ իրենց ուղղութեան: Օրինակ, Միջերկրականում արևելեան քամիները չոր են, հիւսիսայինները՝ սառը, իսկ հարաւայինները՝ տաք: Չնայած որ նախքան առաջին պորտոլանների ընդհանրանալը կողմնացոյցը և հողմերի փնջագիրը (ռոզետ) արդէն իսկ ծանօթ էին քարտէզագէտներին, բայց մեզ հասած առաջին պորտոլանների (1275 թւական) մէջ սրանք գոյութիւն չունեն: Դրանց փոխարէն այստեղ կան միմիայն մի քանի տարբեր կէտերից սկսւող շառաւիղային գծեր, որոնք կարող են ծառայել որպէս չափագրութեան հիմունք: Սրանց յաջորդող պորտոլան քարտէզներում քամիների ուղղութիւնները ցուցադրւում են քամու ցուցասլաքով (փնջագիր), որը նմանւում էր կողմնացոյցի սլաքներին, ուր ամէն մի ուղղութիւն գծւած է տարբեր գոյնի գծերով՝ ըստ նրանց կարևորութեան և քամիների յաճախականութեան: Այսպիսով, պորտոլանները յաճախ յագեցած են լինում կողմնացոյցի և քամու ուղղութիւնների բազմաթիւ իրար խաչաձևող և գունաւոր գծերով և գեղեցիկ զարդարւած բազմաթիւ ցուցասլաքներով ու այլ զարդարանքներով:

Պորտոլան քարտէզները, ինչպէս նախկինում հռոմէական ճանապարհի քարտէզները, յոյժ կարևոր փաստաթղթեր էին, որոնց առկայութիւնը կարող էր պատճառ դառնալ նաւատորմի կամ բանակի վերջնական յաղթանակի հասնելուն, հետևաբար բոլոր մրցակից պետութիւններն իրենց քարտէզները խստօրէն հսկում էին ու պահպանում: Հռոմէական քարտէզները պահպանում էր կայսրը, իսկ, օրինակ իսպանական պորտոլանները պահպանւում էին Սևիլիայում, յատուկ ստորերկրեայ պահեստներում: Ծով դուրս եկող նաւատորմի նաւապետներին տրւում էր միմիայն իրենց գնալիք ճանապարհի պորտոլանի պատճէնը: Ճամբորդութեան ընթացքում պորտոլանները պահպանւում էին նաւապետի սենեակում, փականքի տակ: Երբեմն քարտէզի տուփի մէջ դրւում էր ծանրութիւն, որպէսզի նաւաբեկութեան կամ թշնամին նաւ բարձրանալու դէպքում քարտէզի տուփը ծովը գցելիս խորտակւի և թշնամու ձեռքը չընկնի: Պորտոլանների մասին օտարին որևէ տեղեկութիւն բացայայտելը պատժւում էր մահւամբ: Այսուհանդերձ բազում քարտէզագէտներ հարստացան՝ մրցակիցներին վաճառելով գաղտնաբար պատճէնահանւած պորտոլանների օրինակները:

Պորտոլաններն ընդհանրապէս գծագրւում էին մագաղաթի վրայ և ըստ կարիքի շատ յաճախ գործ էին ածւում, այսպիսով էլ մաշելով դէն գցւում: Այդ իսկ պատճառով է, որ մեզ չեն հասել 1275 թւականից առաջ պատրաստւածները, իսկ 14-րդ դարի պորտոլաններից մեզ են հասել միայն շատ քիչ քանակով քարտէզներ: Պորտոլաններն ընդհանրապէս գեղեցիկ և ճաշակով նկարւած քարտէզներ են, որոնք միաժամանակ նաւավար-

ներին տալիս են ծովային քարտէզագրական անհրաժեշտ և կարևոր տեղեկութիւնները: Այս քարտէզների վրայ եղած հարուստ և մանրակրկիտ տեղեկութիւններն անպայմանօրէն իրենց հիմքում ունեցել են քարտէզագրական հին աւանդութիւններ, որոնք դժբախտաբար մեզ չեն հասել:

Պորտոլանները լինելով ծովային քարտէզներ, ընդհանրապէս տալիս են մանրամասնութիւններ ծովափնեայ քաղաքների ու նաւահանգիստների վերաբերեալ, յատկապէս Միջերկրականի պորտոլանները տալիս են բաւականին մանրամասն տեղեկութիւններ Փոքր Ասիայի ու Անատոլիայի Սևծովեայ և Միջերկրականի ափերի մասին: Պէտք է շեշտել, որ Միջերկրականի շրջանի իտալական և կատալան պորտոլանները ժամանակի համար անսպասելի ճշգրտութեամբ են վերարտադրում ծովափերի մանրամասնութիւնները: Սրանց մէջ ակնառու տեղ են գրաւում Հայկական Կիլիկիոյ ափերի մասին տրուած տեղեկութիւնները, որոնք լինելով քրիստոնէական երկրի ափեր, եւրոպական նաւերի հանդէպ բարեկամական էին տրամադրուած: Մեծ Հայքը ծովին ելք չունենալու պատճառով շատ պորտոլանների սահմաններից դուրս էր մնում, բայց որոշներն իրենց քարտէզի ծայրամասերին նշում են Հայաստանի անունը: Այն պորտոլանները, որոնք ընդգրկում են աւելի մեծ տարածքներ, անպայմանօրէն նշում են Հայաստանը իրենց ցուցադրած երկրների շարքում: (Տես պատ. 24-26, 47, 48, 53)

Հետաքրքիրն այն է, որ պորտոլանները, որոնք Միջերկրականի արևելքում նշում են Հայաստանը, ընդհանրապէս այստեղ նշում են Արարատը՝ Նոյեան տապանով (պատկերուած կողքի վրայ), Հայկական Բարձրաւանդակի լեռները՝ որոնցից ակունք են առնում Եփրատ ու Տիգրիս գետերը և Երզնկա ու Մալաթիա քաղաքները: Մեծ Հայքը պորտոլաններում նշելու պատճառը կարող է լինել այն, որ սա միակ քրիստոնեայ երկիրն էր իսլամական Միջին Արևելքում, կամ էլ նրա անունը եւրոպացի քարտէզագէներին ծանօթ էր Վենետիկում, Ամստերդամում և եւրոպական այլ քաղաքներում աշխատող հայ առևտրականների միջոցով: Մեծ Հայքը ներկայացնելու այս կերպը նոյնութեամբ կրկնւում է բազմաթիւ պորտոլանների մէջ:

Կարևորագոյն պորտոլանների ցուցակի համար տես Jourdin & de la Ronicère – “Sea Charts of the Early Explorers”, NY, 1984

9. Տասնիններորդ դարը

Տասնիններորդ դարի երկրորդ կէսին երկու կարևոր դէպք տեղի ունեցաւ, որն ազդեցիկ դեր խաղաց քարտէզագրութեան մէջ: Առաջինը Գուտենբերգի տպագրական սարքի գիւտն էր, որն առիթ տուեց Պտղոմէոսի Աշխարհագրութեան տպագրութեանը, սկսած 1477 թւականից: Միւսը Ամերիկայի յայտնաբերումն էր՝ կատարուած Կոլումբոսի միջոցով:

Երբ թուրքական ցեղերը 1453-ին խուժեցին Կոստանդնուպոլիս, քաղաքի գրադարանից փախցրած որոշ գրքեր սկսեցին երևան գալ Իտալիայում: Սրանցից մէկն էր Պտղոմէոսի «Աշխարհագրութիւն»ը, որն անմիջապէս թարգմանւեց յունարէն բնագրից լատիներէնի և ինչպէս նախկինում ասւեց, բազմաթիւ քարտէզագէտներ, դրանց շարքին Դոննուս Գերմանիուսը, Սեբաստիան Մինստերը, Մարտին Վալդզէմիլլերը, Բեռլինգերին և ուրիշները սկսեցին պատրաստել քարտէզներ՝ հիմնւելով Պտղոմէոսի տէքստերում տրուած բացատրութիւններին, անուններին և դրանց կոորդինատներին: Քարտէզները սկսեցին երևան գալ առաջին հերթին ձեռագրերում, ապա նոյնպէս նոր լոյս տեսնող տպագիր ատլասներում:

Այս շրջանում Հռոմի, Միլանի, Ֆլորենցիաի, Ուլմի, Բազելի և այլ քաղաքների տպարաններից դուրս էին գալիս պտղոմէոսեան աշխարհագրութեան բազմաթիւ տարբերակները: Սրանք բոլորն էլ հիմնուած էին Պտղոմէոսի «Աշխարհագրութիւն»ի վրայ, բայց ամէն մէկն ունէր իր իւրայատկութիւնն ու ներկայացման ոճի տարբերութիւնը: Սրանցից մէկ մասը ներկուած էր ջրաներկով, մուգ կապոյտ ծովերով ու սրճագոյն լեռնաշղթաներով, ուրիշներում ծովերը կանաչ էին, իսկ քաղաքները կարմիր, երկրներն էլ ներկուած էին բաց գոյնի ներկերով, իսկ քարտէզների մեծամասնութիւնը վաճառւում էր չներկուած: (Տես պատ. 32-37, 44-46, 55, 64-66)

Պտղոմէոսի «Աշխարհագրութիւն»ի ատլասներն ընդհանրապէս ունէին աշխարհացոյց քարտէզ և 26 երկրամասերի քարտէզներ, բայց ժամանակի ընթացքում և նոր հրատարակութիւններում այս քարտէզներին սկսեցին աւելանալ ուրիշ և աւելի նոր գծուած քարտէզներ, որոնցից մէկ մասը նմանւելով պորտոլան քարտէզներին, տալիս էր միմիայն ծովեզրեայ վայրերի մանրամասնը, հաւանաբար պատրաստուած նաւագնացների գործածութեան համար: (Տես պատ. 37)

Քարտէզները հիմնականում գծւում էին մագաղաթի կամ թղթի վրայ: Հնագոյն ժամանակներում գործ էր ածւում մագաղաթը, բայց 13-րդ դարից սկսւեց նաև թղթի գործածութիւնը, որն աստիճանաբար դարձաւ ընդունուած հիմք: Նախքան տպագրութեան գիւտը բոլոր քարտէզները, ինչպէս նաև գրքերը ձեռագիր էին և դրանք բազմացւում էին գրիչների ձեռքով, արտագրելու ընթացքում առիթ տալով շատ սխալների ու վրիպակների, որոնց պատճառով էլ յաճախ նոյն գրքի տարբեր օրինակներն իրարից տարբերւում էին: Քարտէզների պարագայում խնդիրն էլ աւելի բարդ էր: Գիրքը կարող էր արտագրել գեղեցիկ ձեռագիր ունեցող որևէ անհատ, բայց քարտէզն ընդօրինակողը պէտք է գաղափար ունենար քարտէզագրութիւնից ու աշխարհագրութիւնից: Առանց այդ գիտելիքների անհնար էր ընդունելի որակի պատճէն հանելը: Իսկ վրիպակներն ու սխալները ամէն արտագրութիւնից յետոյ բազմանում էին, այնպէս որ մի քանի ընդօրինակումից յետոյ ցանկացած քարտէզ կարող էր դառնալ անճանաչելի և անօգուտ: Տպագրութեան գիւտից սկսած քարտէզների դրոշմները սկզբում պատրաստւում էին փայտի վրայ քանդակւելով, որին աստիճանաբար յաջորդեցին պղնձէ և պողպատեայ թիթեղները: Սրանք աւելի ուշ էին մաշւում, հնարաւորութիւն տալով բազում անգամ օգտագործւելու: Մետաղեայ թիթեղները քանդակագործին նաև հնարաւորութիւն էին տալիս նշելու շատ աւելի մանրամասնութիւններ, քան հնարաւոր էր քանդակել փայտեայ դրոշմների վրայ:

Որոշ յատուկ ատլասներ և հատորներ պատրաստւում էին թագաւորական ընտանիքների համար կամ նրանց պատւէրով, որոնք բնականաբար կազմւում էին լաւագոյն և թանկագին կաշւով, ոսկէ զարդարանքներով ու թագաւորական զինանշաններով: Այսպիսի հատորների քարտէզները յատուկ ուշադրութեամբ և ճաշակով ներկւում էին ճանաչւած մասնագէտների ձեռքերով:

10. 16-ից մինչև 18-րդ դարերը

Այս ժամանակաշրջանի քարտէզների իւրահատկութիւններից են դրանց ձևաւորումը և ծոխ զարդարանքները: Քարտէզի անւանագրի շրջանակը՝ կարտուշը, որի նպատակն էր քարտէզի անունը մնացորդից առանձնացնելը, այս դարերում դարձել էր արւեստի զարդարուն մի աշխատանք, որը երբեմն զբաղեցնում էր քարտէզի մեծ մասը: Զարդարուն կարտուշները առկայ էին համարեա բոլոր քարտէզներում, ներառեալ նաև Հայաստանի քարտէզներում: (Տես պատ. 55)

Քարտէզների վրայի զարդարանքների և նախշերի կիրառումը պատահական չէր, այլ բխում էր անհրաժեշտութիւնից: Սկսած 16-րդ դարից, երբ Հեռաւոր Արևելքի և Նոր Աշխարհի հետ առևտրական կապերը սկսեցին զարգանալ, առևտրականներին հարկաւոր էին այս հեռաւոր աշխարհամասերի լաւագոյն քարտէզները և ուղեցոյցները: Նաւապետները և մեծ ընկերութիւնները իրենց կարիքները հոգալու նպատակով սկսեցին ունեցած քարտէզները վերանայել, լրացնել ու կատարելագործել ըստ իրենց իսկ հաւաքած տեղեկութիւնների և

դիտողութիւնների: Այս արդի և աստիճանաբար աւելի ճշգրիտ քարտէզները պահպանւում էին յոյժ գաղտնի և միմիայն սեփական գործածութեան համար: Նման քարտէզները, որոնք յաճախ ուրիշ տեղ նոյնիսկ չէին էլ արձանագրւում, հանդիսանում էին առևտրականների յաջողութեան բանալիները: Այն քարտէզագէտներն ու քարտէզ հրատարակողները, որոնք իրենց ունեցած քարտէզները առևտրական ճանապարհորդների նորագոյն հաւաքած տեղեկութիւններով նորոգելու և արդիականացնելու միջոցներ չունէին, հէնց իրենց իսկ մասնագիտութեան ասպարէզում աստիճանաբար յետ էին ընկնում նոյնիսկ առևտրական ընկերութիւններից: Այսպիսով, տպագրւած քարտէզների վաճառքը սկսեց տուժել, քանի որ առևտրական ընկերութիւններն ունէին սեփական և գաղտնի նոր քարտէզներ, որոնք աւելի ճշգրիտ էին, քան շուկայում վաճառւող քարտէզները: Հրատարակիչների համար օրէցօր դժւարանում էր առևտրականների ունեցած աշխարհագրական ու քարտէզագրական նորանոր և գաղտնի պահւած տեղեկութիւնները ձեռք բերելը: Քանի որ քարտէզները հնարաւոր չէր վաճառել իրենց մէջ պարունակւած աշխարհագրական տւեալների բերումով, ապա թերևս վաճառքը զարգացնելու համար կարիք կար, որ քարտէզը դառնար զարդարանքի մի առարկայ: Այսպիսով, քարտէզների պահանջարկը զարգացնելու նպատակով, 16-17 դարերի հրատարակիչներն սկսեցին շուկայ իջեցնել զարդարւած և գեղեցիկ գծւած ու ներկւած քարտէզներ ու ատլասներ: (Տես պատ. 55, 59-63)

Քարտէզների կարտուշներն սկսեցին դառնալ աւելի իմաստալից և գեղեցիկ, յաճախ ներկայացնելով քարտէզի աշխարհագրական շրջանում բնակւող տարբեր ժողովուրդների և ազգերի տարազներ, տեղական կենդանիների, բոյսերի և պտուղների գծագրութիւններ: Երբեմն քարտէզները ներփակւում էին գեղեցիկ և ճաշակով զարդարւած շրջանակներով՝ քարտէզը գնորդի համար էլ աւելի գրաւիչ դարձնելու նպատակով: Քարտէզների ծովերն ու ովկիանոսները սկսեցին լցւել գունաւոր հրէշներով, հսկայ ձկներով, դելֆիններով, ծովահարսերով ու մանրակրկիտ գծագրւած առագաստանաւերով, որոնց մէջ կարելի էր տեսնել նոյնիսկ նաւաստիներ ու նաւի սարքաւորումներ: (Տես պատ. 55, 59, 66, 67 և 73)

Այս զարդարանքները սկսեցին նոյնիսկ երևան գալ քարտէզների շրջանակներում: Այստեղ սկսեցին նկարել տւեալ աշխարհամասի քաղաքների, տարազների և բնութեան տեսարանների պատկերներ, որոնք շատ յաճախ իրականութեանը բոլորովին չէին համապատասխանում: Որոշ քարտէզներում կարելի է տեսնել հայկական երևակայական տարազներ հագած կանանց ու տղամարդկանց: Մեզ են հասել քարտէզներ, որոնց վրայի զարդարանքները գերիշխում են բուն քարտէզի մէջ տրւած տեղեկութիւններին, այսպիսով նւազեցնում քարտէզի դերն ու կարևորութիւնը՝ շրջանակի զարդարանքների համեմատութեամբ:

Մինչև 16-րդ դարը, քարտէզները հիմնականում գծագրւում էին ճանապարհորդներից, նաւաստիներից, ծովագնացներից և ուխտաւորներից հաւաքած տեղեկութիւնների հիման վրայ, բայց այս դարաշրջանում սկսեցին երևան գալ ճշգրիտ և զարգացած քարտէզագրական սարքաւորումներ, որոնք կարևոր դեր ունեցան քարտէզագրութեան զարգացման մէջ: Միաժամանակ սկսեցին նաև զարգանալ քարտէզագրութեան ու երկրաչափութեան մեթոդներն ու գործելակերպը: Բրիտանական Ծովակալութիւնը մտահոգւած էր նաւաբեկումների անընդունելի քանակով, որոնց պատճառը շատ յաճախ աշխարհագրական երկայնութեան սխալ հաշւարկումներն էին: Իրավիճակը շտկելու նպատակով, նաւային ճշգրիտ ժամացոյց պատրաստողի համար դեռ 18-րդ դարի սկզբնական տարիներին նշանակւել էր մեծ գումար որպէս մրցանակ: 1730-ական թւականներին կատարւեց սեքստանտի գիւտը, իսկ 1759 թւականին բրիտանացի ժամագործ Ջոն Հարրիսոնը պատրաստեց Ծովային քրոնոմետր[15] կոչւող ժամացոյցը, որը կարող էր անհամեմատ աւելի ճշգրիտ ցոյց տալ ժամանակը քան որևէ այլ ժամացոյց: Նորաստեղծ քրոնոմետրը 156 օրեայ ճանապարհորդութեան ընթացքում սխալւեց միմիայն 15 վայրկեանով: Այսպիսով, քրոնոմետրով և սեքստանտով կատարւող արեգակնային դիտորդութեամբ ամբողջ աշխարհում կարելի էր որոշել ցանկացած կէտի աշխարհագրական երկայնութիւնը: Այս սարքաւորումները հնարաւոր դարձրին մինչև 19-րդ դարի վերջը պատրաստելու երկրագնդի կարևոր շրջանների աւելի ճշգրիտ ու մանրամասն քարտէզներ, թողնելով հեռաւոր վայրերի ու ծովերի յատակների հետազօտութիւնը 20-րդ դարի քարտէզագէտներին:

Նոյնիսկ քրոնոմետրի և սեքստանտի գիւտերից յետոյ, որոնք առիթ տւեցին երկայնութեան ճշգրիտ հաշւարկմանը, մինչև 19-րդ դարի վերջերը ամէն երկիր իր հրատարակած քարտէզներում զրօ աստիճանի միջօրէն ընտրում էր իր երկրի կարևոր քաղաքներից մէկից անցնողը: Միայն 1884 թւականին էր որ եւրոպական երկրները համախմբւելով որոշեցին Լոնդոնի մօտ գտնւող Գրինուիչի աստղադիտարանի միջով անցնող միջօրէականը ընդունել որպէս երկայնութեան զրօ աստիճանը:

Ներքոյ տրւում են 16-ից 18-րդ դարերի կարևոր և հանրաճանաչ աշխարհագրագէտներից և քարտէզագէտներից մի քանիսի համառօտ կենսագրականները, ովքեր իրենց քարտէզներում նշել են Հայաստանը և ում ներդրումները քարտէզագրութիւնը դարձրել են զարգացած և ստոյգ գիտութիւն:

Գերմանացի քարտէզագէտ **Մարտին Վալդզէմիւլլերի** (շուրջ 1470-1518) կարևոր աշխատութիւններից է 12 թերթի վրայ գծւած աշխարհացոյցը, որը նա կատարելագործել ու վերջնականացրել է 1516 թւականին և որից մեզ է հասել միմիայն մէկ օրինակ: Նրա միւս կարևոր աշխատանքն էր 1507 թւականին պատրաստւած պտղոմէոսեան քարտէզը, որը նա պատրաստել էր նոյն հեղինակի «Աշխարհագրութիւն» երկի հիման վրայ: (Տես պատ. 36)

Գերմանացի մաթեմատիկոս և լեզւաբան **Սեբաստիան Միւնստերը** (1489-1552) շարունակելով իր նախորդի՝ Վալդզէմիւլլերի աշխատանքը 1544-ին պատրաստեց պտղոմէոսեան Աշխարհագրութեան երկրորդ կարևոր հրատարակութիւնը, որը բացի 27 քարտէզներից, ունէր նաև հանրագիտարանային տեղեկութիւններ ամբողջ երկրագնդի և նրանում ապրող ժողովուրդների մասին: Նա հաւաքել ու տպագրել է Գերմանիայի բազմաթիւ քաղաքների քարտէզներ, ըստ որում նաև առաջին անգամ տպագրելով տարբեր գիւղերի ու շրջանների քարտէզներ: Նա առաջին քարտէզագէտն էր, որ պատրաստեց առանձին քարտէզներ ամէն մայր ցամաքի համար: Միւնստերը գերմանական քարտէզագրութեան ամենակարևոր դէմքն է և նրա աշխատութիւնները կարևոր դեր են ունեցել քարտէզագրութեան ճանաչման և զարգացման ասպարէզում: (Տես պատ. 45 և 46)

Ֆլամանդացի մաթեմատիկոս և ճշգրիտ սարքեր պատրաստող **Ջերարդուս Մերկատորը** (ծնւած Գերհարդ Կրեմեր անունով, 1512-1594) նաև յայտնի է որպէս կարևորագոյն քարտէզագէտներից մէկը: Նա իր առաջին գլոբուսը պատրաստել է 1541 թւականին, որի վրայ ցուցադրւած էին մանրամասն տեղեկութիւններ: Նրա ձեռքով պատրաստւած քարտէզագրութեան ու երկրաչափութեան մէջ գործածւող ճշգրիտ սարքերը ճանաչւած էին ամբողջ Հիւսիսային Եւրոպայում և միջոց էին ծառայում նորանոր չափագրական նւաճումների: Նրա գիւտն է «մերկատորեան (կամ գլանային) պրոյեկցիա»ն, որն օգտագործելով կարելի դարձաւ երկրագունդը պատկերել տափարակ թղթի վրայ՝ քարտէզը պատկերելով միջօրէականների և զուգահեռականների ցանցի վրայ, որը կազմւած էր դրանց փոխհատւող գծերով: Այս մեթոդը հնարաւորութիւն էր տալիս նաւագնացներին նաւարկութեան ընթացքում աւելի ճշգրիտ կողմնորոշւել: Մերկատորեան պրոյեկցիայով պատրաստւած նրա առաջին ատլասը տպագրւել է 1569 թւականին, ընդգրկելով 18 քարտէզ: Նրա երկրորդ ատլասը, որը պարունակում էր 29 քարտէզ, յետ մահու, 1595 թւականին հրատարակեց իր որդին՝ Ռումբոլդը: Ջաւակների մահւանից յետոյ ըն-

[15] *Այս ժամացոյցը գտնւում է Գրինուիչի ծովային թանգարանում, Լոնդոն:*

տանեկան քարտէզները ու նրանց թիթեղները գնեց **Եոդոկուս Հոնդիուսը** (1563-1612), որն իր փեսայի՝ **Եան Եաննսոնի** (1588-1664) հետ միասին շարունակեց հրատարակել Մերկատորի ատլասները, աստիճանաբար դրանք զարգացնելով ու փոփոխելով: Հոնդիուսն ինքը տաղանդաւոր քարտէզագէտ էր, որը Մերկատորի ատլասները արդիականացրեց, դրանք դարձնելով էլ աւելի գրաւիչ:

Հաշւի առնելով Հոնդիուսի և ապագայում Բլաուի հրատարակութիւնները, 100 տարւայ ընթացքում և ընդհուպ մինչև 17-րդ դարի կէսերը Մերկատորի ատլասն ունեցել է աւելի քան 53 հրատարակութիւն: Այս բոլոր ատլասներում կան Հայաստանի մասին բացատրական յօդւած և քարտէզներ: (Տես պատ. 55, 59, 66 և 67)

Միւս ֆլամանդացի հայտնի քարտէզագէտն է **Աբրահամ Օրտելիուսը** (1528-1598), որը մաթեմատիկոս էր ու լեզւաբան: Նրա կապը քարտէզագրութեան հետ սկսւեց քարտէզ ներկելով: 1571 թւականին նա հաւաքեց 53 քարտէզ, որոնք փորագրել էր Ֆ. Հոգենբերգը, և հրատարակեց իր առաջին ատլասը, որը կոչւում էր «Երկրագնդի ամբողջ տարածք»ը: Այս ատլասը, տարբեր փոփոխութիւններով ու հրատարկութիւններով, երբեմն 115 կամ աւելի քարտէզներով, տպագրւում էր մինչև 1612 թւականը: Ատլասի բոլոր քարտէզները միաչափ են և տեքստը տպագրւած է քարտէզի յետևում: Անտւերպէնում այս ատլասը տպագրւել է տարբեր լեզուներով, իսկ անգլերէն տարբերակը տպագրւել է Լոնդոնում: Օրտելիուսի քարտէզները իրենց տեղեկութիւնների համեմատական ճշգրտութեամբ զիջում էին միմիայն Մերկատորի ատլասներին: Նրանց վրայ տարւած հոգը և գեղեցիկ ու խնամքով կատարւած զարդարանքներն ու փորագրութիւնները, քարտէզները դարձրեցին յոյժ ցանկալի առարկաներ: Արդիւնքն այն եղաւ, որ ամբողջ Եւրոպայի տարածքում սրանց հատորները ընդունւում էին հետաքրքրութեամբ և վաճառւում էին մեծ քանակութեամբ: (Տես պատ. 60-63)

Հոլանդացի երկու յայտնի քարտէզագէտներից են **Ուիլեմ Եաննսոն Բլաուն** (1571-1638) և իր որդի **Յոհաննը** (1596-1673), որոնք հետևեցին աւանդութեանը, սկսելով գիտութիւն և աստղագիտութիւն ուսումնասիրելով՝ նախքան Ամստերդամում ճշգրիտ սարքաւորումների արտադրութիւն սկսելը: Այս ժամանակը համընկաւ «Հոլանդական Արևելեան Հնդկաստանի ընկերութիւն»ի զարգացմանը, որն իր գործունէութեան մէջ սկսեց կիրառել մեծ քանակով ծովային և այլ քարտէզներ, որոնք հրատարակում էր Բլաուն: Վերջինս իր հրատարակչական գործունէութիւնն սկսեց Մերկատորի ատլասով, աստիճանաբար դրան աւելացնելով նոր և արդիական քարտէզներ, զարգացնելով և կատարելագործելով ատլասը, ի վերջոյ հրատարակելով իր հանրայայտ «Մեծ ատլաս»ը, որը պարունակում էր համարեա 600 քարտէզ և աւելի քան 3000 էջ բացատրութիւն: Այս աշխատութիւնը ամենագեղեցիկ տպագրւած ատլասն է, ճաշակով պատրաստւած և ներկւած քարտէզներով: Բլաուի մահւանից յետոյ նրա քարտէզների թիթեղները գնեց մէկ ուրիշ հոլանդացի քարտէզագէտ՝ **Ֆրեդերիկ Դե Ուիտը** (1630-1706), որը շարունակեց Բլաուի աշխատանքը, հրատարակելով բազմաթիւ մանրամասն քարտէզներ: (Տես պատ. 73 և 74)

Քրիստոֆեր Սաքստոնը (1542-1610) առաջին անգլիացի քարտէզագէտներից էր, որն իր աշխատանքը սկսել էր չափագրելով Անգլիայի նահանգները, որի համար նա Բրիտանիայի թագուհի Էլիզաբեթից յատուկ մենաշնորհի արտօնութիւն էր ստացել: Նրա ամենակարևոր աշխատանքն է «Անգլիայի և Ուէլսի ատլաս»ը, որը հրատարակւեց 1759-ին և արժանացաւ բազմաթիւ վերահրատարակութիւնների:

Անգլիացի ամենանշանաւոր քարտէզագէտն է **Ջոն Սպիդը** (1552-1629), որի անունը անմիջականօրէն կապւած է Անգլիայի նահանգային քարտէզների հետ: Այս քարտէզները պատրաստւած են ու ներկւած գեղեցիկ և ճաշակաւոր, մանրամասնօրէն նշելով գիւղերն ու քաղաքները, շրջապատւած նահանգի ազնւականների ընտանեկան զինանշաններով: Նրա քարտէզները մինչև 1700-ականները ունէին մեծ պահանջարկ: Սպիդն իր գծագրութիւններում օգտւել է իր նախորդների՝ Սաքստոնի և Մորդէնի տւած տեղեկութիւններից: Նրա քարտէզների փորագրութիւնները ամենաբարձր որակի էին, որոնց վարպետն էր Հոնդիուսը՝ Ամստերդամում: Սպիդի կարևորագոյն գործերից են

- «Մեծ Բրիտանիայի տարածքը» 1661,
- «Աշխարհի յայտնի մասերի հետազօտութիւններ»ը, առաջին հր. 1627-ին,
- «Մինիատիւր ատլաս», առաջին հր. 1627-ին:

Սպիդի քարտէզները շատ զարդարուն են և գրաւիչ:

Ֆրանսիայի քարտէզագիտութեան մէջ **Նիկոլաս Սանսոնը** (1600-1667) և իր որդիները համահաւասար էին ֆլամանդացի Մերկատորի ընտանիքին: Այս ընտանիքն էր, որ արդի ֆրանսիական քարտէզագիտութեան հիմքը դրեց: Նա ստացաւ «Թագաւորական աշխարհագրագէտ»ի տիտղոս և 1658-ին հրատարակեց իր «Բոլոր աշխարհամասերի ընդհանուր քարտէզ» ատլասը, որը բազմիցս վերահրատարակւեց: Սանսոնի ատլասներում կան Հայաստանի շրջանի բազմատեսակ քարտէզներ: (Տես պատ. 72)

Ֆրանսիացի **Գիյոմ Դէ Լիլի** (1675-1726) հայրն ու եղբայրը նոյնպէս քարտէզագէտ էին: Նա շարունակեց Սանսոնի հետքերով և դարձաւ «Թագաւորի առաջին աշխարհագրագէտ»ը: Դէ Լիլի ընտանիքի գրչին են պատկանում բազմաթիւ ատլասներ, որոնցից կարելի է առանձնացնել «Աշխարհագրութեան ատլաս»ը և «Ռուսական ատլաս»ը, որը Ռուսաստանի առաջին ծաւալուն ատլասն էր, հրատարակւած 1745-ին Սանկտ Պետերբուրգում: Նրա ատլասներում կան Կովկասի և Հայաստանի շրջանի մի քանի մանրակրկիտ քարտէզների տարբերակներ: (Տես պատ. 90)

11. Քարտէզներ հայերէն լեզւով

Եթէ «Աշխարհացոյց»ի ամբողջական ձեռագիրը մեզ հասած լինէր, թերևս՝ ըստ որոշ պատմաբանների, ունենայինք նաև առաջին հայերէն քարտէզը: Բայց մեզ հասել են միմիայն «Աշխարհացոյցի» օրինակներն առանց քարտէզների և մինչև 1991 թւականը մեզ հասած հայերէնով ամենահին քարտէզը համարւում էր Ամստերդամում 1695 թւականին տպագրւած Թովմաս Վանանդեցու «Համատարած աշխարհացոյց»ը: Այս քարտէզում պատկերւած են երկու կիսագնդերը, որտէղ Ամերիկան և Նոր Հոլանդիան (Աւստրալիան) պատկերւած են ոչ ամբողջապէս: Քարտէզը ճոխ կերպով զարդարւած է չորս եղանակների ու առասպելների տեսարաններով և այլ փորագրութիւններով: (Տես պատ. 84)

1991 թւականին Բոլոնիայի համալսարանում պատրաստւում էին քարտէզների ցուցահանդէսի, երբ պահեստում գտնւեց մի մեծ փաթեթ, որի միջից դուրս եկաւ 360 սմ երկարութեամբ և 120 սմ լայնքով ձեռագիր, գունաւոր մի քարտէզ: Ցուցահանդէսի պատասխանատուները չէին հասկանում թէ քարտէզի գրւածքն ի՞նչ լեզւով է, մինչև որ մէկը փաթեթի վրայ նշմարեց «Armenia» բառը: Քանի որ հայազգի Գաբրիելլա Ուլուհոճեանը համալսարանի Գրաբարի ամբիոնի վարիչն էր, քարտէզն անմիջապէս ուղարկւեց նրան: Պրոֆ. Ուլուհոճեանի զարմանքին չափ չկար, երբ տեսաւ հայերէնով պատրաստւած այս հսկայական քարտէզը, որը ցուցադրում էր Արևելեան և Արևմտեան Հայաստանի կարևոր վանքերն ու եկեղեցիները, կաթողիկոսարանները, քաղաքները և այլն, սկսած Արցախից մինչև Կոստանդնուպոլիս, ներառեալ Կիպրոսը, Երուսաղէմը և այլն: Քարտէզի վրայ կային մանրամասն տեղեկութիւններ Հայոց եկեղեցու և պատմութեան մասին, իսկ յիշատակարաններից մէկում նշւած էր նրա պատրաստելու պատճառն ու նպատակը:

Երկու յիշատակարանների բացատրութիւններից յայտնի եղաւ, որ քարտէզը Բոլոնիացի Կոմս Լուդովիկօ Մարսիլիի պատուէրով պատրաստել է պոլսեցի Երեմիա Չելեբի Քէոմուրճեանը, 1691 թականին: Մարսիլին ինքը հետաքրքրական ու արկածախնդիր մի անձնաւորութիւն էր, որն ունէր քարտէզների ու ձեռագրերի մեծ հաւաքածու և զբաղւում էր նաև դիւանագիտութեամբ: Քարտէզն ունի աւելի քան 750 տեղանուն, որոնք գոյներով տարբերակւած են: Պրոֆ. Ուլուհոճեանն այս քարտէզի մասին պատրաստել է գիտական մի աշխատութիւն «Հայաստանի հնադարեան մէկ քարտէզ» վերնագրով, որը տպագրւել է 2000 թականին: Նա այստեղ տւել է քարտէզի մանրամասն բացատրութիւնը, գրւածքները թարգմանելով իտալերէնի, նաև տալով յաւելեալ բացատրութիւններ տեղամասերի ու դրանց վերաբերող իրադարձութիւնների ու դէպքերի մասին: Առ այժմ, այս քարտէզը մեր ունեցած հայերէն լեզւով հնագոյն քարտէզն է[16]: (Տես պատ. 83)

Երրորդ հայերէն քարտէզը «Երկիր Աւետեաց» քարտէզն է, տպագրւած Վենետիկում 1746 թականին, որից յետոյ՝ 1751-ին տպագրւեց Հայաստանի քարտէզը ըստ «Աշխարհացոյց»ի, իսկ սրան հետևեցին այլ երկրների քարտէզներ:

Առաջին մեծածաւալ հայերէն ատլասն է 1849 թականին Վենետիկում տպագրւածը, որը պարունակում է մանրամասն բացատրութիւններ և քարտէզներ կիսագնդերի և մայր ցամաքների վերաբերեալ, ինչպէս նաև Հայաստանի և Օսմանեան Կայսրութեան քարտէզները, պատրաստւած և ներկւած բարձր ճաշակով: Այս կարելի է համարել հայերէնով տպագրւած առաջին իրական ատլասը: (Տես պատ. 113 և 114)

Հայկական քարտէզագրութեան մէջ մեծ դեր են ունեցել Վենետիկի Սբ. Ղազար Միաբանութիւնն ու նրա տպարանը, ուր տասնութերորդ դարից մինչև այսօր տպագրւում են բազմաթիւ քարտէզներ հայերէն լեզւով: (Տես Ճեմճեմեանի աշխատութիւնը, նշւած գրականութեան բաժնում):

Ամբողջ այս ընթացքում Երևանի Մատենադարանում առկայ էր մի 15-րդ դարի ձեռագրերի հաւաքածոյ, որի մէջ տեղադրւած է 13-14 դդ. փոքրիկ մի բոլորակ: 12,5 սանտիմետր տարամագիծ ունեցող այս բոլորակը T-O տեսակի աշխարհացոյց քարտէզ է, որի կենտրում է Երուսաղեմը: Քարտէզը պատրաստւած է Կաֆայում և իրականում մեզ հասած հնագոյն հայերէն քարտէզն է: Իր ֆիզիքական փոքր չափի և պարզ կառուցւածքի պատճառով քարտէզը չի ստացել իր արժանի գնահատականը: Տե՛ս պատ. 17:

12. Առեղծւածային քարտէզներ

Ինչպէս նախկինում յիշատակւեց, քարտէզները երբեմն ունեն նաև խորհրդաւոր իմաստ և նպատակ: Օրինակ, սրանցից են կորած գանձերի տեղը ցուցադրող քարտէզները և անյայտ երկրի, Ատլանտիդայի տեղը ցուցադրող քարտէզները: Քարտէզներին կապւած առեղծւածները և խորհրդաւոր իմաստները փոխանակ օրէցօր պարզաբանւելու, աստիճանաբար աւելի են բարդանում ու դառնում անբացատրելի:

1929 թականին Կոստանդնուպոլսում գտնւեց մի պորտոլան ծովային քարտէզ, որը գծել էր օսմանցի ծովահէն Պիրի Ռէյսը[17], 1513 թականին: Իր «Ծովերի գիրք»ը աշխատութեան մէջ, Պիրի Ռէյսը տեղեկացնում է, որ քարտէզն ընդօրինակել է աւելի վաղ ժամանակաշրջանի ուրիշ քարտէզներից, առանց բացայայտելու իր աղբիւրները: Քարտէզից մեզ հասած մասը նշում է Ատլանտեան ովկիանոսը, Իսպանիայի ափերից մինչև Հարաւային Աֆրիկա և Հարաւային Ամերիկայի ափերը ընդհուպ մինչև Անտարկտիկայի ծովերը: Քարտէզում կան շատ մանրամասն տեղեկութիւններ, օրինակ գետեր, խորշեր, նեղուցներ և այլն: Այդ ժամանակ Ամերիկան դեռ նոր էր յայտնաբերւել, հետևաբար նրա ծովեզրերը դեռ հետազօտւած չէին, սակայն ինչպէ՞ս բացատրել Պիրի Ռէյսի տւած մանրամասն տեղեկութիւնները, սրանք որտեղի՞ց էին գալիս: Բացի ծովափնեայ մանրամասնութիւնները, այս քարտէզն ունի նաև տեղանքների ճշգրիտ աշխարհագրական երկայնութիւնները: Ի նկատի ունենալով այն փաստը, որ մինչև 18-րդ դարի կէսերը եւրոպական զարգացած ծովային ուժերը աշխարհագրական երկայնութիւնը որոշելու ճշգրիտ որևէ միջոց չունէին և պարզապէս հիմնւում էին փորձ ունեցող անհատների ենթադրութեան վրայ, ապա Պիրի Ռէյսի քարտէզը գծողները որտեղի՞ց էին իմացել ցուցադրւած վայրերի երկայնութիւնները, այն էլ այսքան ճշգրիտ կերպով:

Քարտէզներին կապւած առեղծւածներն ու խնդիրները դառնում են էլ աւելի բարդ ու անբացատրելի, երբ նայում ենք Պիրի Ռէյսի քարտէզի հարաւային հատւածին: Այստեղ ցուցադրւած են Անտարկտիդայի ցամաքամասի ափերը, որոնց ճշգրտութիւնը միմիայն հնարաւոր եղաւ հաստատել 1949 և 1958 թականների սէյսմիկ հետազօտութիւններից յետոյ, երբ այս նորաստեղծ գիտութիւնը թոյլ տւեց «տեսնել» սառոյցի տակ գտնւող ցամաքամասի ափերի ուրւագիծը: Այս ցամաքամասը, որը Մաուդ Թագուհու ցամաքամաս է կոչւում, 6000 տարի է որ ծածկւած է աւելի քան մէկ կիլոմետր հաստութիւն ունեցող սառցաշերտով: Տեղեակ լինելով 15-16-րդ դարերի քարտէզագրութեան հնարաւորութիւններին, անհասկանալի է, թէ ինչպէ՞ս էր հնարաւոր իմանալ այս ծածկւած ցամաքամասի ափերի ուրւագիծը և որտեղի՞ց էին եկել այդ տեղեկութիւնները: Եթէ որևէ հին քաղաքակրթութիւն հետազօտել է այս ցամաքամասը, ապա այդ պէտք է կատարւած լինի գոնէ 6000 տարի առաջ:

Ըստ Գաւին Մենզիսի, Պիրի Ռէյսի վերոյիշեալ քարտէզը, ինչպէս նաև մի շարք պորտուգալական պորտոլան քարտէզներ ընդօրինակւած են չինական քարտէզներից, որոնք պատրաստել են Չինաստանի Ժիու Դի կայսեր ծովակալները 1421-23 թականներին դէպի Աֆրիկա ու Ամերիկաներ, ինչպէս նաև Հիւսիսային և Հարաւային բևեռներ կատարած նաւարկութիւնների ընթացքում: (Տես Գաւին Մենզիս, *1421 – Երբ չինացիները յայտնաբերեցին աշխարհը, 2001*): Այս հետաքրքրաշարժ գիրքը բաւարար բացատրութիւն է տալիս չինացի ծովակալների կատարած ճամբորդութիւնների ու նրանց ունեցած քարտէզագրական տեղեկութիւնների վերաբերեալ, բայց այստեղ չկան համոզիչ փաստեր բևեռային ցամաքամասերը գծելու համար նրանց ունեցած հնարաւորութիւնների մասին:

16-րդ դարում հարաւային բևեռի ցամաքամասի վերաբերեալ քարտէզներում Օրոնտէուս-Ֆինէուսի 1531-ի քարտէզը և Մերկատորի 1595-ի Ատլասը նշել են բաւական մանրամասնութիւններ, ներառեալ այդ ցամաքամասը երկու մասի բաժանող մի ջրային տարածութիւն, որի առկայութիւնը յայտնի դարձաւ միմիայն 20-րդ դարում: Քանի որ այս քարտէզագէտներին ծանօթ չէր Պիրի Ռէյսի քարտէզը, ապա կրկին անգամ հարց է ծագում թէ նրանց ունեցած տեղեկութիւնները որտեղի՞ց էին և ի՞նչ աղբիւրներից:

Ֆրանսիացի քարտէզագէտ Ֆիլիպ Բուաշն իր 1737 թականի Անտարկտիդայի ցամաքամասը քարտէզում գծել է երկու մասից բաղկացած այս մայր ցամաքի ճշգրիտ սահմաններն ու ափերը: Նա նոյնպէս նշում է, որ իր աղբիւրները հնագոյն այլ քարտէզներ են, որտեղ նշւած էր այս մայր ցամաքը երկու մասի բաժանող ջրանցքը: Այս դիտողութիւնն էլ միմիայն հնարաւոր էր կատարել նախքան որ նոյն ցամաքամասը ծածկւէր սառոյցի շերտով, իրականութիւն՝ որը գիտութեանը յայտնի դարձաւ 1958 թականին:

Երբ նայում ես հիմնականում Միջերկրական ծովի պորտոլան քարտէզներին, եղած առեղծւածը էլ աւելի է բարդանում: Ըստ երևոյթին այս քարտէզների մեծամասնութիւնը արտանկարւած են նոյն աղբիւր(ներ)ից, քանի որ սրանք համարեա բոլորն ունեն նոյն մասշտաբը և գծւած են նոյնանման: Արդեօք հնարաւո՞ր է, որ կարթագենացի և փիւնիկեցի նաւագնացները, որոնք հին ժամանակներում նաւարկում էին այս շրջանում, ունենային Միջերկրական Ծովի ափերի ճշգրիտ քարտէզները: Եթէ այդ քարտէզները գոյութիւն ունէին, ապա ո՞վ

[16] Այս քարտէզները չեն ներառնում ձեռագրերի մէջ պատահող շրջանաձև T-O տեսակի քարտէզները:
[17] *Տես Չարլզ Հապգուդի «Maps of the Ancient Sea Kings» գիրքը:*

էր դրանց հեղինակը և ի՞նչն էր այս զարգացած գիտութեան աղբիւրը: Արդեօք հնարաւո՞ր է, որ մեզ հասած պորտոլան քարտէզները արտագրուած լինեն Ալեքսանդրիայի գրադարանում գոյութիւն ունեցած նախաքրիստոնէական քարտէզներից ու գիտական աղբիւրներից: Արժէ նաև յիշատակել, որ այս պորտոլան քարտէզներն ունեն շատ ճշգրիտ հաշւարկներ աշխարհագրական երկայնութեան վերաբերեալ: Արդեօք ինչպէ՞ս:

Մինչև այսօր այս առեղծուածների վերաբերեալ գոյութիւն չունեն համոզիչ բացատրութիւններ: Սրանք կարող են ունենալ երկու հնարաւոր, բայց տրամաբանութեամբ կասկածելի բացատրութիւններ: Կամ այս տեղեկութիւնները փոխանցւել ու մեզ են հասել աւելի քան 6000 տարի առաջ գոյութիւն ունեցած և զարգացած, բայց մեզ անյայտ քաղաքակրթութեան աղբիւրներից, կամ էլ դրանք մեզ են տրւել մեր երկրագնդից դուրս գոյութիւն ունեցող մի այլ քաղաքակրթութեան ներկայացուցիչների միջոցով՝ ում մասին մենք անտեղեակ ենք:

13. Քարտէզը 19-րդ դարից յետոյ

Այսօրւայ մեր ունեցած քարտէզները շատ տարբեր են 15-րդ դարի առաջին տպագիր քարտէզներից, որոնք երկար ու խորդուբորդ ճանապարհ են անցել՝ հասնելու համար այս գագաթնակէտին:

Սկսած 19-րդ դարի կէսերից, քարտէզներն աստիճանաբար դարձան ճշգրիտ և վստահելի և տարբեր հրատարակիչների տպագրած նոյն աշխարհամասի քարտէզներն սկսեցին օրէցօր դառնալ միանման: Այս քարտէզների տարբերութիւնները հիմնականում մնացին հին ու նոր տեղանունների և ցուցադրւած մանրամասնութիւնների սահմաններում: Այսպիսի զարգացման հասնելը հնարաւոր դարձաւ բազմաթիւ աշխարհագրագէտների ու քարտէզագէտների միասնական ջանքերով ու քրտնաջան աշխատանքի շնորհիւ:

Չնայած նրան, որ անգլիացի քարտէզագէտ Սաքստոնն առաջինն էր, որ պատրաստեց Անգլիայի և Ուէլսի նահանգների մանրամասն քարտէզները, սակայն առաջին քարտէզը, որը պատրաստւեց քարտէզագրութեան մէջ ստանդարտ դարձած եռանկիւնաւորման մեթոդով, Ֆրանսիայում էր: Դեռ 1660 թւականին Ֆրանսիայի Թագաւորական Ակադեմիան պատւիրել էր եռանկիւնաչափութեան մեթոդով պատրաստել Փարիզի շրջանի քարտէզը: Սրան հետևեց Բրիտանիան, ուր առաջին ճշգրիտ քարտէզը Դուրի և Լոնդոնի միջև եղած ճանապարհի քարտէզն էր, որն աւարտւեց 1780-ականներին: Միւս երկրները հետևեցին այս օրինակներին և 19-րդ դարի կէսերին, Եւրոպայի երկրների մեծ մասը չափագրւած էր այս մեթոդով: Այսուհանդերձ աշխարհի 90 տոկոսը դեռ մնում էր չչափագրւած կամ, ըստ քարտէզագրութեան տերմինների, որպէս «անծանօթ երկրամաս»:

Եթէ մէկը ցանկանար աշխարհի երկրների քարտէզներն իրար կից շարելով ստանալ աշխարհի քարտէզը, ապա շատ խնդիրների կհանդիպէր: Հիմնականում այս խնդիրները կլինէին.

1- Ամէն երկիր պատրաստում էր իր քարտէզը որպէս զրօ միջօրէական վերցնելով իր մայրաքաղաքը կամ կարևոր քաղաքներից մէկը:
2- Ամէն քարտէզագէտ գործածում էր իր սեփական պայմանական նշանների ընտանիքը: Այսպիսով գործածւում էին աւելի քան 1000 սիմւոլներ:
3- Քարտէզների չափացոյցները (մասշտաբ) բազմաթիւ էին և քարտէզներից ամէն մէկն ունէր իր տարբեր չափացոյցը:
4- Տեղանունները գրւում էին տարբեր այբուբեններով և յաճախ նոյն վայրը տարբեր քարտէզներում կրում էր տարբեր անւանումներ:

Այս հսկայ տարբերութիւնները շեշտակի կերպով զգալ էին տալիս միջազգային քարտէզագրութեան համար միատեսակ քաղաքականութիւն և չափանիշներ ստեղծելու կարիքը և Միջազգային Աշխարհագրական Կոնգրեսի հիմնադրումը:

Երկարութիւնը չափելու միջազգային ստանդարտը՝ մետրը, արդէն իսկ որդեգրւել էր Ֆրանսիայի կողմից, երբ 1798 թւականին Եւրոպայի երկրներից շատերն էլ ընդունեցին այս չափանիշը, սակայն դրա կիրառումը գիտնականների և կազմակերպութիւնների կողմից կարիք ունեցաւ աւելի երկար ժամանակի, նոյնիսկ չափանիշի հիմնադիր երկրում, Ֆրանսիայում:

1884 թւականին Վաշինգտոնում կայացած «Առաջին միջազգային միջօրէականի կոնֆերանս»ը քննարկեց և որոշեց ընդունել Լոնդոնի մօտ գտնւող Գրինուիչ քաղաքի աստղադիտարանով անցնող միջօրէականը որպէս զրօ աստիճանի միջօրէական: Այս կոնֆերանսը նոյնպէս վաւերացրեց ժամանակի և օրւայ չափանիշները, որոնք պէտք է գործածւէին բոլոր չափագրութիւններում:

Համաշխարհային քարտէզագրութիւնը որակապէս նոր մակարդակի հասաւ, երբ 1891 թւականին «Հինգերորդ միջազգային աշխարհագրական կոնգրես»ը վաւերացրեց 1/1,000,000 չափացոյցով համաշխարհային քարտէզ պատրաստելու նախագիծը: Այս որոշումից յետոյ հնարաւոր դարձաւ մշակել ամբողջ աշխարհը ճշգրիտ չափագրելու ծրագիրը, մի աշխատանք, որը կարիք ունի խաղաղ պայմանների և անդամ երկրների համագործակցութեանը՝ նախապայմաններ, որոնց հասնելը շատ յաճախ անհնար է լինում:

Քսաներորդ դարի երկրորդ կէսից սկսած, հաղորդակցութեան ու էլեկտրոնային տեխնոլոգիայի սրընթաց զարգացումը հասաւ նրան, որ չափագրութեան համար սկսւեցին օգտագործւել արհեստական արբանեակները, որոնք անդադար պտոյտներ են գործում երկրագնդի շուրջը: Սրանք մեզ հնարաւորութիւն տւեցին չափագրելու երկրագնդի նոյնիսկ անհասանելի մասերը, ինչպիսիք են անապատները, լեռների կատարները և նոյնիսկ ովկիանոսների յատակը: Այսօրւայ լրտեսական արբանեակները կարող են հետևել ցանկացած անհատի շարժումներին և նրա եղած վայրը որոշել մի քանի մետր ճշգրտութեամբ: Այս տեխնոլոգիայի զարգացման նպատակները ռազմական էին, բայց միւս արդիւնաբերութիւններն էլ օգտւեցին այս առաջիմութիւններից և զարգացան արագ թափով: Արդիւնքն այն եղաւ, որ այսօրւայ շուկաները լեցուն են ամէն տեսակի նորագոյն էլեկտրոնիկայի և կապի սարքաւորումներով, որոնք անհատին կարող են առաջնորդել դէպի ցանկացած վայրը կամ հասցէն: Ըստ երևոյթի, այսօր քարտէզագրութիւնը հասել է իր զարգացման գագաթնակէտին և մեր մոլորակի վրայ այլևս շատ յայտնագործութիւնների կարիքը չի զգացւում, բայց ի՞նչ իմանաս, թէ ապագան մեզ ու՞ր կտանի և ի՞նչ ուղղութեամբ կառաջնորդի: Իսկ մինչև այսօր հնագոյն քարտէզների առեղծուածները դեռ գոյութիւն ունեն և չգիտենք դրանք ե՞րբ կամ ինչպէ՞ս կբացատրւեն:

КРАТКАЯ ИСТОРИЯ КАРТОГРАФИИ АРМЕНИИ

1. ВВЕДЕНИЕ

Армяне более 2500 лет непрерывно жили на Армянском нагорье и в сопредельных областях. С древних времен эта страна называлась по-разному: Урарту, Наири, Армения, Айк, Туркомания. Эти названия можно увидеть на картах, в рукописях и документах разных периодов.

На древнейших картах и в книгах по истории Армения иногда представлена как независимое государство, а иногда – как разделенное между соседними империями и подвластное им, тем не менее, ее имя всегда упоминается, начиная с древнегреческих, римских, исламских и других текстов и карт до наших дней.

Название Армении есть даже на картах-портоланах, которые составлялись для мореплавания и вообще показывали только прибрежные города и районы, в то время как Армения не имела ни одного морского берега или порта. Вероятно, ее название было известно западным картоведам от армянских торговцев, утвердившихся в Амстердаме, Венеции и других торговых центрах, или же страна Армения была известна как древнейшее восточное христианское государство. В контексте христианской картографии Армения, как страна, первой принявшая христианство как государственную религию в 301 г., занимает важное место, так как с первых веков нашей эры армяне обосновались в Иерусалиме и сегодня также присутствуют там, как одни из хранителей христианских святынь.

Картография, которая начиналась с нескольких линий и окружности, нарисованных на глиняной плитке или вырезанных на каменных плитах, прошла длинный и интересный путь развития. Сегодня карта является важным документом в руках человечества, и интересно было бы узнать, как ее воспринимали и что думали о ней наши предки.

2. НАЧАЛЬНЫЙ ПЕРИОД

Древнейшей картой, дошедшей до нас, является карта северного Междуречья, высеченная на вавилонских глиняных табличках около 3800 лет до н.э. После нее идут планы границ земельных участков, созданные около 2300 лет до н.э., которые использовались царем Саргоном с целью сбора дани.

Древнейшая карта мира, на которой изображена также Армения, – вавилонская глиняная плитка, изготовленная 600 лет до н.э. Это круглая карта, на которой Земля изображена в виде плавающего в морях диска, в центре которого находится Вавилон, окруженный двумя другими странами, которые названы Ассирия и Армения (Урарту)[1]. Изображен Евфрат, который берет начало в горах Армении и, протекая через Вавилон и болота Междуречья, впадает в Персидский залив. Моря здесь отмечены как “горькие” воды, а вокруг Земли изображено 7 островов, о которых говорится на обратной стороне таблички (см. рис. 1а и 1б).

Из последующего исторического периода до нас дошли обрывки папирусов, чертежи на которых похожи на планы городов и областей. Сохранилась также резьба на усыпальнице одного из египетских фараонов, которая показывает течение Нила через Египет, и другие подобные изображения.

У нас нет точных сведений о географических, астрономических и картографических познаниях наших предков, построивших Стонхендж в Британии и Зорац Карер в Сисианском районе Армении. Эти два сооружения, имеющие общие черты, а также обсерватория Мецамора убеждают нас в том, что наши предки наблюдали и изучали космос и звезды, ориентировались по ним и, вероятно, объясняли определенные природные явления.

Согласно древнегреческому историку Геродоту, жившему в 489-425 гг. до н.э., который был также известным географом, Аристагор Милетский показывал в Спарте карту, высеченную им на железной плите и предлагал с ее помощью совершить поход на Персию. На карте были отмечены Иония, Лидия, Фригия, Киликия, Кипр и, наконец, Армения и город Сузы, который был престольным городом Персии. По данным пояснениям, эта карта должна была изображать регион Среднего Востока, Ирана и Армении (см. рис. 3).

Один из древнейших путевых документов – папирус, в котором говорится о египетском фараоне Сете (1366-1333 гг. до н.э.) и упоминается о его победоносном возвращении из Сирии. Тем не менее, какого-либо документа, который можно было бы назвать “картой”, из этого исторического периода до нас не дошло.

3. ГРЕКИ, АЛЕКСАНДРИЙСКАЯ ШКОЛА И АРМЕНИЯ

Название Армения упоминается уже в разных документах раннегреческого периода. Анаксимандр из Милета (611-547 гг. до н.э.), живший в период Классической Греции, считается основоположником картографии. Он первым создал общую карту известного ему мира. Карта, конечно, не дошла до нас, но ее можно восстановить по записям картографа. Гекатей, живший в 550-480 гг. до н.э., также путешествовал по Ахеменидскому царству, делая записи о своем путешествии, и также составил карту мира, используя методы Анаксимандра. Тем не менее, несмотря на то, что в древних источниках есть множество объяснений названий разных стран, местностей, дорог и городов, ни одна карта, относящаяся к тому периоду, до нас не дошла (см. рис. 2).

[1] *Эта глиняная плитка находится в Британском музее в Лондоне.*

Древнегреческий философ Пифагор в 523 г. до н.э. создал философскую школу в Колоне. Здесь он записывал свои астрономические, философские и физические теории и замечания, в том числе и теорию о шарообразности Земли, но нам не известно, как он пришел к своим заключениям. Эратосфен, живший позднее, в 276-194 гг. до н.э., приняв теорию о шарообразности Земли, развил ее, добавив, что Земля является центром Вселенной и все небесные тела вращаются вокруг нее. Известный ему мир он с помощью экватора разделил на две части. Затем добавил воображаемые линии меридиана, которые, проходя от одного полюса Земли к другому, пересекали экватор по вертикали. Это те же линии меридиана, которые используются в картографии по сей день.

Согласно теории Эратосфена, населенный мир, который по-гречески именовался "ойкумена" (дословно: "населенный мир"), состоит из трех материков: Европы, Азии и Либии (Африки), которые окружены океаном. Краями известного мира являлись на востоке – остров Тапробана (Цейлон), на западе – Иберия Испанская, на севере – остров Тивле (Исландия), на юге – острова Кинамона.

Эратосфен предполагал, что плывя от Иберии (Испания) прямо на запад, можно достичь Индии, огибая таким образом мир. Он считал, что ширина известного мира от одного края до другого равна 12500 км, а остальные 2/3 земного шара – океан. Расстояние от юга до севера, по его мнению, равно 14000 км (см. рис. 4).

По Эратосфену, карта земного шара имеет относительно симметричный вид, разделена произвольной сеткой, на которой расстояния между географическими точками отмечены приблизительно. Гиппарх критиковал Эратосфена, указывая на то, что географический труд требует более серьезного научного подхода и точности.

Самый весомый вклад Эратосфена в географию и картографию – это расчет диаметра земного шара. Беря за основу расстояние между городами Александрией и Сиеной (Асуан) – 800 км, и измерив длину теней при полуденном солнце от двух одинаковых ветрикальных шестов, установленных в этих двух городах, он рассчитал, что угол между ними составляет 1/50 часть целого круга. Следовательно, окружность земного шара, по его расчетам, будет равна 50×800=40000 км. Эта цифра на удивление точна, если не принимать во внимание частично яйцевидную форму земного шара.

Одним из гигантов географии был Страбон (63 г. до н.э. – 24 г. н.э.), родившийся в Понте, в городе Амасии. Он совершил множество путешествий и работал в известной библиотеке Александрии. Эта библиотека была основана в III в. до н.э. при египетских фараонах династии Птолемеев. В библиотеке имелось более 490000 рукописей, она была самой большой в классическом мире. Одним из первых ее руководителей был философ и географ Эратосфен. В библиотеке была собрана разнообразная литература, начиная с арифметики, философии, кончая медициной и географией; книги привозились с разных краев света специальными скупщиками. Один из наместников Александрии – Птолемей Эвергет выработал простой способ пополнения и совершенствования фонда библиотеки. Он приказал, чтобы у ворот Александрии отбирались книги у всех путешественников, въезжающих в город. Далее эти книги отправлялись в библиотеку, где книжники сразу же их переписывали, копию возвращали владельцу, а оригинал оставляли в библиотеке (см. рис. 5).

Труды Страбона были написаны во втором десятилетии нашей эры и почти все, что мы знаем о географических и картоведческих трудах его предшественников, дошло до нас в труде Страбона "Географическая теория"[2] (или просто "География"). Одна из глав книги посвящена Армении. В ней говорится о географии, истории и народе Армении. Эти тома дошли до нас, но рукописи использованных Страбоном источников сгорели во время пожаров в александрийской библиотеке[3] и бесследно исчезли.

Существовавшие до Страбона географические теории, выводы и замечания в большинстве своем имели отношение к изучению солнечной системы, луны, ночного неба и созвездий. То же самое продолжается и сегодня: ученые не уделяют достаточного внимания событиям, происходящим непосредственно рядом с ними, природному и географическому состоянию земного шара. Именно Страбон первым стал изучать сравнительное расположение географических точек и расстояний между ними. Обратив тем самым на это внимание современных ему ученых, он превратил географию и картографию в важные области науки. Именно его последователи первыми предположили, что, возможно, и не земной шар является центром известного им космоса и даже не солнце, которое в их глазах было лишь другим огненным шаром.

По мнению Страбона, основоположником географии был Гомер, ибо излагая "Илиаду" и "Одиссею", основываясь на своих знаниях, он смог представить читателю очень подробные и точные географические сведения. что касается известного ему мира, Страбон разделял теорию Эратосфена и соглашался с отмеченными им границами.

Древние греки первыми стали применять солнечные часы "геном", с помощью которых они определяли географическую широту местности, измеряя длину тени от вертикального шеста. Этот прибор в дальнейшем развился и превратился в астролябию, простой вариант которой применялся в начале нашей эры, а более сложные – с многочисленными колесами, делениями и прочим, использовали даже вплоть до XVII в. Сложные астролябии, которые являются предшественниками сегодняшних секстантов и теодолитов, были довольно развитыми приборами, применять которые было не легко, но ими можно было измерять углы различных небесных тел и т.д. (см. рис. 31).

Философ-стоик Посейдон Апамейский принадлежит к поколению картоведов, пришедшему после Страбона. Он имел свою философскую школу на острове Родос в I в. В своих трудах он попытался описать земной шар и солнечную систему и даже предпринял попытку измерить окружность Земли, на этот раз основываясь не на Солнце, а на звездах. В своих расчетах он основывался на расстоянии между Родосом и Александрией и величине углов между двумя городами. Но из-за неточных средств, использованных при измерении морского пространства и небольших, но влияющих на результат ошибок в измерении углов, полученные им данные не были одинаковыми. Расчеты Посейдона дали два варианта: 38000 км и 29000 км. Он сначала решил принять бо́льшее число – 38000, но в дальнейшем решил взять за основу число 29000 км[4]. Более 17-ти веков спустя в 1630 г. фламандский географ Питер Бертиус, основываясь на пояснениях Посейдона, реконструировал его схему земного шара, согласно которой он имел яйцевидную форму, а населенный мир "ойкумена" – занимал половину поверхности земного шара, а остальная его часть была покрыта океаном.

---

[2] *Английский перевод С. Гамильтона и В. Фалконира издан в Лондоне в 1856 г.*

[3] *Первый пожар в библиотеке произошел в 47 г. до н.э., оставшиеся рукописи были сожжены войсками императора Аврелия в 273 г. и докончил 'работу" халиф Омар в 642 г.*

[4] *По сегодняшним расчетам средняя цифра равна 40000 км.*

4. МАРИН, ПТОЛЕМЕЙ И АРМЕНИЯ

Одним из значительных географов древнего периода был Марин Тирейский (ок. 130-70 гг. до н.э.), живший в Александрии и имевший в своем распоряжении знаменитую библиотеку. Есть сведения, что Марин составил географическую карту мира, которую дополнял и уточнял на протяжении ряда лет. Одним из его важнейших трудов были книги по географии, которые содержали сведения о разных странах, районах, городах, горах и реках. Главным недостатком этих книг, по мнению Птолемея, было неполное наличие географических координат местностей. Для некоторых местностей была указана географическая широта, для других – географическая долгота, которые в лучшем случае были предположительными числами. Часто не было дано никакой координаты, которая могла бы на карте уточнить расположение данной местности. Трудно представить, как Марин мог бы составить на такой основе какую-либо карту. Даже если и существовали какие-то карты, они не дошли до нас.

Одной из причин того, что древнейшие карты не дошли до нас, может быть и то, что они чертились на пергаменте или на папирусе, которые будучи недолговечным материалом, при использовании ветшали и не сохранялись. Несмотря на то, что некоторые древние письменные тексты дошли до нас, относящиеся к ним карты не сохранились. Только несколько карт, высеченных на каменных надгробьях или глиняных плитках, вынесли все испытания времени и дошли до нас.

Самым значительным картоведом и географом Древнего мира был Клавдий Птолемей Александрийский (90-168). Он был астрономом и математиком, написал много работ в этих областях науки, но главным его трудом является восьмитомная “География”, текст которой полностью дошел до нас. В первом томе этого труда Птолемей объясняет, какие методы и пути можно использовать при изучении космоса и земного шара, как можно определять координаты данной местности. Некоторые из предложенных им методов применяются и по сей день. Здесь он говорит и о Марине, критикуя его работы и указывая на невнимание, проявленное им в отношении географической науки.

В конце седьмого тома и в восьмом томе своего труда Птолемей дает разъяснения о картографии и частях света, границах между странами, разделении мира на части света и страны. Остальные тома посвящены описанию более чем 8000 местностей известного мира и их координатам. Эти тома разделены на главы по странам. В начале каждой главы дается географическое описание страны, названия важнейших гор и рек, названия соседних стран, названия важнейших городов данной страны и их географические координаты. Названия городов взяты из греческих источников того времени и часто не совпадают с известными нам и с современными названиями.

Текст, относящийся к Армении, помещен в пятом томе и разделен на две части. Список городов Малой Армении дан в главе “Первая карта Азии”. Он включает в себя 79 топонимов, важнейшими из которых являются Мелитана (Малатия), Никополис, Сатала и Кома. О Великой Армении написано в главе “Третья карта Азии”, где дано 85 топонимов, важнейшие из которых Арташат, Армавир, Тигранакерт, Аршамашат и Тушпа (Ван). Согласно Джону Шардану, отмеченное в тексте Птолемея название “Терва” соответствует современному “Ереван”[5] (см. рис. 38-42).

Как было отмечено выше, Птолемей весьма критически относился к трудам Марина, особенно из-за недостаточно внимательного изложения и отсутствия подробностей. По всей вероятности, Птолемей использовал в своих книгах труды Марина, однако дополнил их своими знаниями и собранными им сведениями и представил более целостную работу.

Карта населенного мира в книге Птолемея начинается на западе с Испании и Ирландии и доходит до Китая, на севере – с Исландии до Эфиопии и острова Цейлон. Птолемей был настолько дальновидным, что не ограничил известный ему мир, оставив края населенного мира открытыми для географов будущих поколений, чтобы они дополнили карту новыми странами и новыми сведениями (см. рис. 32 и 36).

В своем труде Птолемей часто обращается к вопросу, как можно дополнить и уточнить составленные им карты новыми сведениями, полученными у путешественников. Из этих объяснений можно сделать вывод, что Птолемей, возможно, составлял и карты к своей книге. На этих картах север был наверху, карты часто имели скошенные внутрь стороны. Согласно “Географии” и пояснениям к приложенным к ней картам, по Птолемею, мир состоял из трех материков – Азии, Европы и Африки, которые в свою очередь были разделены по разным картам. Согласно Птолемею, к книге прилагаются следующие карты:

- Карта мира, окруженная ветрами, дующими с разных сторон, и разделенная на климатические пояса.
- Европа, разделенная на 10 карт;
- Африка, разделенная на 4 карты;
- Азия, разделенная на 12 карт;

Название Армении есть в пяти из этих карт.

В предисловии к изданию английского перевода “Географии” Птолемея Жозеф Фишер[6] пишет, что 26 карт, прилагаемых к этой книге, возможно, начерчены самим Птолемеем, но карта мира, с большей вероятностью, начерчена александрийским географом Агатаденоном или даже Марином (см. рис. 32, 36).

Вероятно, карты составлялись на основе координат более 8000 местностей, или же, наоборот, географические координаты и топонимы были взяты из уже готовых карт. В обоих случаях можно заключить, что к книгам прилагались карты.

Самая большая ошибка была допущена Птолемеем в определении длины окружности Земли. Он не принял во внимание 40000 км, рассчитанные Эратосфеном, взял определенные Посейдоном и Марином 28000 км и использовал это число при расчете окружности описанного им мира. Другим недостатком его карт и географических координат было то, что Птолемей вынужден был доверять сведениям и расчетам торговцев, путешественников и паломников, которые часто бывали недостаточно точными. Несмотря на это, “География” Птолемея – это труд, имеющий такое колоссальное значение для картографии и географии, что даже спустя 1300 лет со дня его создания, до XV-XVI вв. картоведы при

[5] *Sir John Chardin, ‘The travels into Persia”, volume 1, London, 1686, стр. 244.*
[6] *Claudius Ptolemaeus, Geographia, translated by E. L. Stevenson, NY Library, 1932.*

составлении своих первых атласов больше доверяли этому труду и основывались именно на нем, а не новых сведениях, полученных от современных им мореплавателей, или же на новых морских картах, начерченных ими.

До нас дошло более чем 40 рукописных текстов из томов “Географии” Птолемея, некоторые из которых неполные. После изобретения книгопечатания, с 1477 г. до 1600 г. эта книга издавалась более 50-ти раз. Ее издателями были известные картоведы Донн Германий, Себастьян Мюнстер, Мартин Вальдземюллер, Берлингери и др. Каждый из них при создании своих карт основывался на данных о географических местностях из рукописи Птолемея, так что, несмотря на то, что эти карты отличаются друг от друга, они в основном схожи и сегодня по ним можно определить, какая географическая область на них представлена. Вообще, все, что мы сегодня считаем западной картографией, основано на этом важнейшем труде (см. рис. 21).

Как отмечено, карты Птолемея до нас не дошли, но самая ранняя из дошедших до нас птолемеевских карт является экземпляром XI в. Она, вероятно, была переписана с оригинала карты Птолемея. Некоторые скептически настроенные ученые даже дошедшие до нас карты приписывают не Птолемею, а Агатаденону Александрийскому и считают, что они были созданы между II и XI веками.

Карты Птолемея просты, не имеют красочных шапок и заглавий, что было общей чертой для некоторых карт XV-XVI вв. часть атласов, напечатанных в XV или XVI вв. на основе его труда, была цветной, а некоторые из них даже напечатаны на пергаменте.

5. СРЕДНЕВЕКОВАЯ АРМЯНСКАЯ КАРТОГРАФИЯ

Первый географический труд на армянском языке это “Ашхарацуйц” (“Атлас мира”), созданный в 591-610 гг. Его автором некоторые ученые считают родоначальника армянской историографии Мовсеса Хоренаци[7], а большая часть ученых приписывает авторство армянскому математику и географу Анании Ширакаци[8]. Этот труд основан на тексте Паппа из Александрии, который в свою очередь основывается на “Географии” Птолемея. Кроме текста Паппа в “Ашхарацуйце” есть много других подробных сведений об Армении, Персии, других странах Кавказа. Большую часть труда и составляют эти дополнительные сведения. Книга написана на грабаре (древнеармянский язык) и переведена на ашхарабар (новоармянский язык)[9], на латинский[10], французский[11], немецкий[12] и переиздана с английским предисловием[13]. Книга известна в двух вариантах, один из которых более краткий. Несмотря на то, что до нас дошли несколько рукописей книги, а также напечатанные экземпляры, к сожалению, ни один из них не имеет карт.

[7] *Мовсес Хоренаци жил в V веке.*
[8] *Анания Ширакаци жил в VII веке.*
[9] *Գ.Բ. Պետրոսյան, Անանիա Շիրակացու մատենագրություն, Երևան, 1979.*
[10] *G. and W. Whiston, Historiae Armenicae. Libri III, London, 1736.*
[11] *M. J. Saint-Martin, Memoires Historiques et Geographique sur l’Arménie, t. II, Paris, 1819, pp. 310-394. P. A. Soukry, St. Lazzaro, Venice, 1881.*
[12] *J. Marquart, Berlin, 1901.*
[13] *Prof. Robert Hewsen, Delmar, NY, 1995.*

В Матенадаране г. Еревана хранятся несколько средневековых рукописей, в которых имеются круглые или овальные карты европейского

Т-О типа. Они в основном находятся в рукописях XI-XIV вв., в них заметно также влияние исламской картографии. Эти карты представляют другой этап развития картографии, который привел к напечатанию в XVII в. армянских карт (см. рис. 17).

Первая карта исторической Армении была выгравирована и отпечатана в Конгрегации Мхитаристов острова св. Лазаря в Венеции в XVIII в. В ее основе лежали сведения “Ашхарацуйца”. На этой карте представлена территория исторической Армении, указаны названия провинций и другие географические подробности (см. рис. 97).

6. ХРИСТИАНСКАЯ КАРТОГРАФИЯ И СРЕДНЕВЕКОВЬЕ

Как и следовало ожидать, название Армения присутствует в христианской картографии, т.к. это единственная христианская страна к востоку от Анатолии. В христианской картографии Армения часто изображается согласно Евангелию: с Араратом и Ноевым ковчегом. На некоторых картах Земной рай – Эдем, находится на территории Армении или непосредственно по соседству с ней.

Древние римляне при создании карт преследовали разные цели. Карта являлась для них средством и документом для определения и указания дорог. Она использовалась для продвижения войск императора и осуществления контроля над каждым уголком Римской империи. Для войска важным было точное расстояние между городами и местами для отдыха, географическое же расположение этих местностей в данном случае было не столь важным.

Лучшим образцом римской карты является так называемая “Певтингерская карта”, оригинал которой, вероятно, был создан в I в. Она является картой дорог Римской империи, имеет ширину 34 см, длину

6,4 м. Конрад Певтингер[14] из Аугсбурга в 1508 г. приобрел копию этой карты IV в. На карте отмечены дороги, ведущие от Рима ко всем уголкам империи, начиная с Мидии до Англии, включая Армению, из городов которой отмечены Арташат, Тигранакерт, Багаван (Рагауния) и Востан. Эта карта с точки зрения географии полностью ошибочна, но успешно служила цели, поставленной при ее создании (см. рис. 7).

С утверждением на западе христианства и началом господства религиозных идей, история сотворения мира, данная в Ветхом Завете, стала неопровержимым “фактом”. Из-за этого картография и география как науки пострадали, попав в рамки, поставленные религией, потеряв возможность и стремление к развитию. В период со II до XV в. в картографии образовалась огромная пропасть, поскольку развившиеся до этого времени научные теории были отвергнуты, и их место заняли новые “реальности”, базирующиеся на религиозных, евангельских основах. Уже в картах Птолемея были заметны контуры реальной картины мира, которая легла в основу современной картографии, в то время как представленный в средневековых христианских картах вплоть до XIV в. земной шар был весьма далек от реального.

[14] *Отсюда и название карты – Певтингерская таблица.*

В период раннего христианства церковь не обращала внимания на географию и карты. Все изменилось, когда в VI в. Константин Антиохский, известный под именем Козьма, установил каноны церковной топографии. Согласно ей, мир представляет собой не шар, а плоскость, на которой три участка суши, окруженные океаном. За этим последовала T-O карта Исидора Севильского (ок. 560-636), которая была издана в его труде "Этимология". В течение последующих тысячи лет эта карта и ее варианты стали основами христианского картоведения (см. рис. 9).

Эти карты, основанные на вере, были весьма просты и незатейливы. Они назывались картами Псалтыря, были известны также как "T-O карты", которые появились в средневековье. На этих картах, если их можно считать картами, земля изображена в виде плоского диска (буква O), которая реками и морями разделена на три части наподобие буквы T, отсюда и название этих карт – T-O. На них восток находится в верхней части карты, где расположен Земной рай – Эдем. Вертикальная линия буквы T – Средиземное море, отделяющее Европу от Африки, а слева от горизонтальной линии река Дон, справа – Нил, которые отделяют Азию от других материков. Эти карты в свое время были весьма распространены, но до нас дошло небольшое количество экземпляров разных размеров – от нескольких сантиметров до нескольких метров в диаметре (см. рис. 13, 14, 18, 20 и 30).

